եղբա՛րք, չարչարանաց եւ երկայնամտութեան[1] *զմարգարէսն, որք խաւսեցան յանուն Տեառն:* 11 *Ահաւասիկ երանեմք համբերողացն*[2]*. զհամբերութիւնն Յովբայ լուարո՛ւք, եւ զկատարումն Տեառն տեսէ՛ք»:*

Ալէլուիա. ԻԹ· 2]. *Բարձր առնեմ զքեզ, Տէ՛ր, զի ըն[կալար զիս]:*

220. ԱՒԵՏԱՐԱՆ ՄԱԹԷՈՍԻ [ԻԳ· 30-35]. *Եւ տեսցեն զՈրդի մարդւոյ*[3] *եկեալ՝ ամպաւք*[4] *զաւրութեամբ եւ փառաւք բազմաւք: 31 Եւ առաքեսցէ զհր|Գ.333ա|եչատակս իւր փողով մեծաւ, եւ ժողովեսցեն զընտրեալս նորա ի չորից հողմոց՝ ի ծագաց երկնից մինչեւ ի ծագս նորա*[5]*:* 32 *Ի թզենւոյ*[6] *անտի ուսարո՛ւք զառակն. զի յորժամ նորա ոստն կակղասցի*[7]*, եւ տերեւն ցըցւիցի*[8]*, գիտէք թէ մերձ է ամառն:* 33 *Նոյնպէս եւ դուք՝ յորժամ տեսանիցէք զայս ամենայն եղեալ*[9]*, գիտասջիք թէ մերձ է ի դուրս:* 34 *Ամէն ասեմ ձեզ՝ եթէ ոչ անցցէ ազգս այս, մինչեւ այս ամենայն եղիցի:* 35 *Երկինք եւ երկիր անցցեն, եւ բանք իմ մի՛ անցցեն»:*

Քարոզէ. Վասն պա՛՛:

Եւ ասէ զաղաւթս.

ՄԷ. *Փառաւորեմք զքեզ, փառաց թագաւո՛ր, յոյս եւ ակնկալութիւն ամենայն արարածոց, ի քեզ յուսալով յուսացաք, որ փոխանակ ապականացու կենցաղոյս, դանապական եւ զանվախճան կեանսդ չնորհեցեր: Եւ փոխանակ անոտի եւ անդրկան կենացս պարգեւեցեր մեզ զվերինն երուսաղէմ: Վասն որոյ աղաչեմք զքեզ, Տէ՛ր, թո՛ղ զմեզս, քաւեա՛ դանաւրէնութիւնս սորայ, եւ արժանաւորեա՛ զսայ հանդչել յանտրտում |Գ.333բ| ուրախութիւնդ՝ ի Բրիսաոս Յիսուս, ի Տէր մեր, որում վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ այժ[մ]՛՛:*

Խաղաղութիւն ամենեցուն. Անտուծոյ՛՛:

ՄԸ. *Յիշեա՛, Տէ՛ր, զհոգի քահանայիս այսորիկ զքո սուրբ փառաց քոց: Եւ եթ[է] բդկաւբէն ինչ յանցեալ իցէ՝ բասխւ կամ գործով, կամ մտածութեամբ, չնորհեա՛ յանցանաց սորայ թողութիւն, որ ոչ յումեքէ արդելուս զգիտութիւն քո: Ընկա՛լ զհոգի սորայ ընդ սուրբս քո, եւ զմեզ արժանի արա՛ փառաւորել զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգիդ այժմ եւ միշտ եւ յաւի[տեանս]:*

---

[1] *Ս երկայնմտութեան*
[2] *Ս համբերողաց*
[3] *Ս մարդոյ*
[4] *Ս ի վերայ ամպոց երկնից] ամպաւք*
[5] *Ս նոցա*
[6] *Ս թզենւոյ*
[7] *Ս ոստքն կակղասցին*
[8] *Ս ցըցուիցի*
[9] *Ս > եղեալ*

ԿԱՆՈՎՆ Է.ԵՐՈՐԴ ԱՒՈՒՐՆ

Սաղմոս. [ՃԽԲ· 10]. *Հոգի՛ քո սուրբ եւ*[1] *բարի առ[աջնորդեսցէ ինձ յերկիր ուղիղ]:*

223. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ՅԵՍԱՅԵԱ ՄԱՐԳԱՐԷԷ [Կ· 20-22 - ԿԱ· 1-3]. *Եւ կատարեսցին աւուրք սգոյ քո·* 21 *եւ ժողովուրդ իմ*[2] *ամենեւին արդար, եւ յաւիտեանս ժառանգեսցեն զերկիր՝ պահել*[3] *զնորատունկս*[4] *գործոց ձեռաց իւրոց*[5] *ի փառս:* 22 *Սակաւաւորն հզարաւոր եղիցի, եւ կրսերն*[6] *յազգ մեծ, զի ես՝ Տէ՛ր, ընդ ժամանակս ժամանակս ժողովեցից զնոսա:* կա. 1 *Հոգի Տեառն ի վերայ իմ, վասն որոյ եւ աւծ իսկ զիս՝ աւետարանել աղքատաց առաքեաց |Գ.334ա| զիս*[7]*՝ քարոզել գերեաց զթողութիւն, եւ կուրաց տեսանել,* 2 *կոչել ամ Տեառն ընդունելի եւ աւր հատուցման Աստուծոյ մերոյ, մխիթարել զամենայն սգաւորս,* 3 *տալ սգաւորաց Սիովնի փառս. փոխանակ մոխրոյն՝ աւծումն ուրախութեան*[8]*: Եւ կոչեսցին նոքայ ազգ*[9] *արդարութեան՝ տունկ Տեառն ի փառս»:*

241. ՊԵՏՐՈՍԻ ԱՌԱՋԵԼՈՑ Ի ԿԱԹՈՒՂԻԿԵԱՑ ԹՂԹ[ՈՑՆ· Բ· Պետր· Ը· 3-8]· «*Որպէս ամենայն ինչ մեզ՝ իւրոյ աստուածեղէն զաւրութեանն*[10] *այնմիկ, որ կոչեաց*[11] *զմեզ յիւր փառն*[12] *եւ ի մեծ վայելչութիւնս*[13]*:* 4 *Որով մեծամեծ*[14] *եւ պատուական աւետիքն*[15] *պարգեւեալ են մեզ. զի նոքիմբ*[16] *աստուածեղէն բնութիւն*[17] *լինիցիմբ հաղորդակիցք, փախուցեալք ի ցանկութեանց աշխարհիս եւ յապականութեանցս* 5 *յայսմիկ*[18]*, զամենայն փոյթ ի մէնջ*[19] *առեալ՝ ձերովք հաւատովքդ*[20] *մատակարարիջիք զառաքինութիւն*[21]*, եւ առաքինութեամբն՝ զգիտութիւն,* 6 *եւ գիտութեամբն զհամբերութիւն, եւ համբերութեամբն՝ զժուժկալութիւն, եւ ժուժկալութեամբն՝ զաստուած-*

---

[1] *Ս > սուրբ եւ*
[2] *Ս զքո] իմ*
[3] *Ս եւ պահել*
[4] *Ս զնորատունկ*
[5] *Ս իւրեանց*
[6] *Ս կրտսերն*
[7] *Ս զիս + բժշկել զբեկեալս սրտիւք*
[8] *Ս ուրախութեան + եւ սգաւորացն հանդերձ փառաց՝ փոխանակ ոգւոցն վհատութեան*
[9] *Ս նոքա ազգք*
[10] *Ս զաւրութեանն + առ ի կեանս եւ աստուածպաշտութիւն չնորհեալ· ի ձեռն գիտութեան*
[11] *Ս այնորիկ որ կոչեացն*
[12] *Ս ի փառսն*
[13] *Ս վայելչութիւն] մեծ վայելչութիւնս*
[14] *Ս որովք մեծամեծքն*
[15] *Ս պատուական աւետիք*
[16] *Ս նոքիմբք*
[17] *Ս բնութեանն հաւատոցն*
[18] *Ս յապականութեանց: 5 եւ սմին այսմիկ*
[19] *Ս մէնջ*
[20] *Ս ձերովքն հաւատովք*
[21] *Ս զառաքինութիւնն*

պաշտուբիւն[1], *7 եւ աստուածպաշտուբեամբն զեղ|Գ.334բ|բայրսիրուբիւն, եւ եղբայրսիրուբեամբն՝ զսէր: 8 Զայսոսիկ ձեր յանձին կալեալ եւ ի սոյն յաճախեալ, ոչ դատարկս եւ անպտուղս զձեզ հաստատեսցեն*[2] *ի Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի գալուստն*[3]*»:*

Ալէլու. սաղմոս ՃԻԵ· [=ՃԻԴ· 1]· *Տէ՛ր, լո՛ւր աղաւթից իմոց, ունիկն դի՛ր խնդր[ուածոց իմոց ճշմարտուբեամբ քով]:*

242. ԱՒԵՏԱՐԱՆ ՅՈՀԱՆՆ[ՈՒ. Ը· 35-40]. *«Ի վաղիւ անդր կայր Յովհաննէս, եւ յաշակերտաց անտի նորա՝ երկու: 36 Նայեցեալ*[4] *ընդ Յիսուս*[5] *զի գգնայր, ասէ. Ահաւասիկ գառն*[6] *Աստուծոյ: 37 Լուան ի նմանէ երկու աշակերտքն՝ զի խաւսէր, եւ գնացին զհետ Յիսուսի: 38 Իբրեւ դարձաւ Յիսուս եւ եահս*[7]*՝ զի երթային զհետ նորա, ասէ ցնոսա. Զի՞նչ խնդրէք: Եւ նոքայ*[8] *ասեն ցնայ*[9]*. Ռաբբի՛, որ կոչի*[10] *վարդապետ, Ո՞ւր են աւթեւանք*[11] *քո: 39 Ասէ ցնոսա Յիսուս*[12]*. Եկա՛յք եւ տեսա՛ք. եկին եւ տեսին՝ ուր էին աւթեւանք*[13] *նորա. եւ առ նմայ*[14] *աւգան այն աւր, զի ժամ էր՝ իբրեւ տասներորդ: 40 Էր Անդրէաս՝ եղբայր Սիմովնի վիմի, մի յերկուց անտի, եւ գնաց զհետ Յիսուսի*[15]*»:*

Քարոզէ. *Վասն գտանելոյ մեզ՛՛:*

Եւ ասէ զաղաթս.

ՄԻ. *Փոգն երկնաւոր ի բարձունս գոչէ առ նըւնջեցեալսն եւ ասէ. Արի՛ք, սիրելի՛ք Քրիստոսի, ահա եկն թագաւորն |Գ.335ա| ձեր Քրիստոս եւ պարգեւէ ձեզ հանդիստ եւ ուրախուբիւն եւ կեանս անմահականս՝ փոխանակ աշատուբեան ձերոյ եւ ճգնուբեան, արի՛ք եւ տեսէ՛ք զՔրիստոս թագաւորն՝ զփեսայն անմահ, որում դուք էք ցանկացողք, վասն զի նմայ փափագելով, եւ վասն նորա եղէք պանդուխտք երայ երկրի: Արի՛ք, տեսէ՛ք զնո աքանչ վայելչուբիւն եւ զմեծ փառսն, արի՛ք, տեսէ՛ք զարքայուբիւն նորա, զոր պատրաստեաց ձեզ: Ա-*

[1] *Ս եւ գիտուբեամբն զժուժկալուբիւն, եւ ժուժկալուբեամբն զհամբերուբիւն, եւ համբերուբեամբն զաստուածպաշտուբիւն] եւ գիտուբեամբն... զաստուածպաշտուբիւն*
[2] *Ս հաստատիցեն զձեզ*
[3] *Ս գիտուբիւնն] գալուստն*
[4] *Ս եւ նայեցեալ*
[5] *Ս յիսուսի*
[6] *Ս քրիստոս գառն*
[7] *Ս եահս զնոսա*
[8] *Ս սոքա] եւ նոքայ*
[9] *Ս ցնա*
[10] *Ս թարգմանեալ կոչի*
[11] *Ս աւթեվանք*
[12] *Ս > յիսուս*
[13] *Ս աւթեվանք*
[14] *Ս նմա*
[15] *Ս որ լուանն ի յովհաննէ՝ եւ գնացին զկնի նորա] եւ գնաց զհետ յիսուսի*

րի՛ք, տեսէ՛ք գտենչալի զՏէրն, զոր սիրեցէք, յաղագս որո վըշտացայք, տեսէ՛ք զնայ բազում համարձակուբեամբ, եւ ցնծարէ՛ք հանդերձ նովաւ: Եւ զանճառելի զաւրուբիւն եւ զխնդուբիւնն ոչ ոք հանէ ի ձէնջ: Եկա՛յք, վայելեցէ՛ք՝ զոր ակն ոչ եառես, եւ ունկն ոչ լուաւ, զոր պատրաստեաց Աստուած սիրողաց իւրոց, զոր չնորհեաց փափագողացն Քրիստոսի: Յայնմ աւուր յիշատակին սուրբքն ընդ ամպս լուսաւորս ի հանդիպումն նորա թռիչս, արժանաւորս՝ անկարծելի փառաւք տեսանեն զփեսայն երկնաւոր, |Գ.335բ| զանմահն Աստուած: Ո՛վ իցէ արդեւք որոյ այնպէս գտանիցի արժանաւոր յափշտակելով հանդերձ խնդուբեամբ մեծաւ ընդ առաջ քո, Քրիստո՛ս: Արժանաւորքն յափշտակին փառաւք, եւ ամբարիշտքն մնան ամաւթով: Եւ ի ձեռն կուսի Աստուածածնին մաւր քո սուրն հրեղէն մեկնեցաւ ի դրախտէն կենաց կերակուր ամենայն հաւատացելոց: Զդուռն բացեր, զճանապարհն հորդեցեր, զճշմարտուբիւնն երեւեցուցեր, զծարաւիս աղբերացուցեր, զսեղանն ուղղեցեր եւ զհարսանիսն կազմեցեր: Զպարարեալն զեներ եւ զբաժակն անապական խառնեցեր յուրախուբիւն: Առաջիկայ փեսայդ մտեալ ես ի բազմել, առաքեալքն զբազումս հրաւիրեցին, պատրաստերէ՛ք զձեզ սուրբս, լոյսն անդրէն իսկ լուսաւորի, պսակն անթառամի՝ վայելուչ պատրաստ կայ: Զայնն մերձեցաւ, եւ աղաղակն եհաս, գերեզմանք բացան, եւ մեռեալք յարեան:

Խաղաղութիւն.

ՄԻԱ. *Աստուա՛ծ բարձրեալ, չնորհեա՛ ինձ՝ մեղաւորիս յաւուր յայն|Գ.336ա|միկ զքո բազում գթուբիւնդ, զի մի՛ յայտնեսցին ծածուկք ամբարշտուբեան իմոյ առաջի տեսողաց՝ հրեշտակաց եւ հրեշտակապետաց, մարգարէից եւ առաքելոց, արդարոց եւ մեղաւորաց: Այլ եւ ապրեցո՛յ զիս՝ զամբարշտեալս չնորհաւք քո եւ գթուբեամբ: Ընկա՛լ զիս ի դրախտն փափկուբեան ընդ կատարեալ արդարոն: Մի՛ անտես առներ զաղաւթս ծառայից քոց, բարեխաւսուբեամբ ամենայն սրբոց, զի քոյ են փառք յաւիտեանս. ամէն*[1]*:*

[1] Գ.335բ՝ ստ. լս-ում. «Քահանայապաղն աւարտեցաւ Թ. աւրովն»:

ՅԱԻԵԼՈՒԱԾ Գ.

ՄԵՌՈՆԱԻՐՀՆԷՔ

Ա. 958. ԻԴ. 134ա-8ա.
Բ. 965. ԻԳ. 122բ-6ա.
Գ. 999. ԻՋ. 78բ-80բ:

ԻԴ.[1] Ի ՄԵԾԻ ԱՒՈՒՐ ՀԻՆԳՇԱԲԱԹՈՒՆ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ ՍՈՒՐԲ ԵՒՂՈՑՆ, ԶՈՐ ՄԵՌՈՆՆ ԿՈՉԵՆ, ՈՐ Է ՀԻՆ ԶԱՏԻԿ ԱՒՐԻՆԱԿԱՆԻՆ ԵՒ Ի ՆՈՐՍ ՓՈԽԵԱԼ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ[2]

Ընդ առաւաւտն մտանէ եպիսկոպոսն[3] ի սարկաւագանոցն եւ լուանա զձեռս[4]: Ապա առնու եւղ[5] արծաթի սափորով եւ ելանէ յեկեղեցին, եաթն սարկաւագաւք հանդերձ, սպիտակազգեստ[6] լինելով, մոմեղինաւք լուցելովք եւ խնկաւք բուրելովք, եւ հովանաւորեալ քշոցաւք: Եւ երթան առաջի |134բ| սրբոյ սեղանոյն: Եւ ծածկեն զեւղն երկոտասան թեւաւք, այսինքն՝ երկոտասան հանդերձիւք: Եւ սարկաւագն քարոզէ. *Խնդրեսցուք հաւատով եւ*[7] *միա[բանութեամբ]*[8]: Երիս Տէր ողորմեա:

Եւ կաթողիկոսն[9] ասէ զաղաւթս[10].

ՄԻԲ. *Աստուա՛ծ հարցն եւ Տէ՛ր ողորմութեանց, որ ստեղծեր զմեզ ի կեանս եւ յանապականութիւն, եւ ապականեալ մեր յապականութիւն՝ ի հաւանել բանսարկուին, անցանելով զպատուիրանաւն քով, եւ վաճառեալ ի մեղացն ի մահ, դարձեալ վերստին նորոգեցեր ի կեանս եւ յանեղծութիւն զստեղծուածս ձեր քոց, զթացեալ ի ձեռն հա համբ միածնի քո Տեառն մերոյ եւ փրկչին*[11] *Յիսուսի Քրիստոսի, Որ զանպատումն զայս եւ զանհասս քահանայութեամբ խրատեաց զմեզ, որոց զծանրութիւն մեղաց եւ զամաւթ արկեալ զանճամբ երկնային խորհրդաբանութեամբ հաւանեցուցեր, եւ նորոգեալ մեզ ճանապարհ կենաց եւ փրկութեան, ջրով եւ Հոգով, եւ զցնծութիւն ողորմութեան քո չնորհեցեր մեզ: Եւ այժմ, նոյն Տէ՛ր, խոնարհեալ առաքեա՛ զպարարատութիւն ողորմութեան քո՛ ի պատուղ ձիթենոյս այսորիկ, զոր եառեր յաւգտակարութիւն եւ ի փրկութիւն ամենայն մարդկութեանս, եւ բնակեցո՛ առ մեզ զչնորհս գործակցութեան ամենազաւր Հոգւոյդ[1] քո Սրբոյ եւ բարերարի, խորհուրդ քեզ եւ պաշտաւն գործելով, զի արժանի լիցուք փառաւորել սուրբ սրտիւ զՔէդ Աստուած, որում երկր|135ա|պագեն հրեշտակք եւ հրեշտակապետք, տէրութիւնք, պետութիւնք, իշխանութիւնք եւ զաւրութիւնք, որում առաջի կան պատուական չորեքկերպեան կենդանիքն, չուրջ կալով զսուրբ աթոռով փառաց քոց, բազմադէմ եւ բազմահայեաց քերովբէքն, որ երկու թեւաւքն ծածկեն զերեսս իւրեանց, եւ երկու թեւաւքն ծածկեն զոտս իւրեանց, եւ երկու թեւաւքն թռուցեալ աղաղակեն ընկեր առ ընկեր, անդադար բերանով եւ անլուր ձայնիւ՝ զյաղթական աւրհներգութիւնն գոչեն եւ աղաղակեն եւ ասեն.*

Եւ ժողովուրդն ի վեր նայելով[2] ասեն.

Սո՛ւրբ, սո՛ւրբ, սո՛ւրբ, Տէ՛ր զաւրութեանց, լի են երկինք եւ երկիր փառաւք քո, ովսաննա՛ բարձրելոյն, աւրհնեալ՝ որ եկիր եւ գալոց ես անուամբ Տեառն, աւրհնութիւն ի բարձունս:

Եւ եպիսկոպոսն ասէ զաղաւթս.

ՄԻԳ. *Սրբոց սուրբ եւ ամենայն բարեաց տուիչ, որ զերկնաւոր քո չնորհս եւ զանբաւ ողորմութիւնս պարգեւեցեր մեզ, եւ զհոգեւորական եւ զիմանալի քահանայութեան աւրինակ ի յերկրի չնորհեցեր, դու միայն ես ամենակալ Աստուած ի չնորհս Որդւոյ ի յերկինս եւ յերկրի, հաղորդակից սորին եղեալս, եւ ի ձեռն Մովսէսի զաւծեցեալն արարեր զեւղն, քահանայական կազմել հրամայեցեր, զի եւ յայնժամ եղիցի քեզ ի թագաւորութիւն եւ ի քահանայութին, յազգ սուրբ, ժողովուրդ սեպհական: Դու եւ այժմ միայն Աստուած, մարդասէր Տէ՛ր, առաքեա՛ զՀոգիդ քո[3] սուրբ[4] ի |135բ| յերկնից, ի սուրբ աթոռոյ քումմէ յառաջիկա յիւղս յայս, զի եղիցի սա սրբեալ անուամբ քո սրբոյ, եւ միածնի Որդւոյ[5] քո սիրելոյ՝*

---

[1] *Ա.135ա, 136ա* ստ. լս.՝ «*մեռոն աւրհնել*», *137ա* «*մեռոնի*», *Բ.123ա* ստ. լս.՝ «*մեռոն աւրհնել*», *124ա, 125ա* «*մեռոնի*», *Գ.79ա* ստ. լս.՝ «*մեռոնեւրհնէք*»
[2] *Գ կանոն մեռուն աւրհնել] ի մեծի աւուր... քրիստոսի*
[3] *Գ եպիսկոպոս*
[4] *Գ > ի սարկաւագանոցն եւ լուանա զձեռս, Ա ձեռս*
[5] *Գ առնի յեւղ*
[6] *Ա սպիտակ զգեստ*
[7] *Բ > եւ*
[8] *Բ միաբան.*
[9] *Բ կաթուղիկոսն*
[10] *Բ զաղաւթս զայս*
[11] *Բ փրկչի*

[1] *Ա հոգոյդ*
[2] *Բ նայեցեալ*
[3] *Ա > քո*
[4] *Բ > սուրբ*
[5] *Ա որդոյ*

Տեառն մերոյ եւ փրկչի Յիսուսի Քրիստոսի եւ Հոգւոյդ Սրբոյ յաւծումն սրբութեան եղիցի քեզ դարձակացս ծառայից քոց, զորս լուսաւորեցեր եւ վերստին ծնար, եւ սրբեցեր յամենայն կեղծաւորութեանց, զի սուրբ մնասցեն ի սրբութեան Քրիստոսի քո, եւ արժանի արարեր զմեզ սուրբ սրտիւ եւ պարզ մտաւք բանալ զբերանս մեր եւ[1] *երգել եւ ասել.*

Եւ ժողովուրդն ասեն.

Հայր մեր որ յերկինս ես, սուրբ է անուն քո, եկեսցէ արքայութիւն քո, եղիցին կամք քո Որպէս յերկինս եւ յերկրի: Եկայք, ժողովո՛ւրդք, զաւրհնութիւնս ընդ հրեշտակս երգեսցուք սմա ասելով. Սո՛ւրբ, սո՛ւրբ, սո՛ւրբ ես, Տէ՛ր Աստուած մեր:

Եւ եպիսկոպոսն ասէ զաղաւթս գայս[2].

ՄԻԴ. *Տէր Աստուած մեր, որ մեծդ ես եւ սքանչելի եւ փառաւորեալ, որ պահես զուխտ եւ զողորմութիւն սիրելեաց քոց, եւ շնորհեցեր զթողութիւն մեղաց ի ձեռն սրբոյ Որդւոյ*[3] *քո, եւ նորոգումն կենաց պարգեւեցեր՝ որք հնացեալն էին մեղաւք. դու ես որ իմաստնացուցանես*[4] *զաղայս եւ կանգնես դանկեալս, սիրես զարդարս քո, եւ պահես զանանկս, դու ես որ հաներ զմեզ ի խաւարէ եւ ի սուուերաց մահու, ասացեր կապելոց, թէ Ելէ՛ք, եւ որք ի խաւարին էին*[5] *թէ. Յայտնեցարո՛ւք: Քանզի ծագեցեր ի սիրտս մեր զլոյս գիտութեան Քրիստոսի քո, որ երեւեցար յերկրի եւ ընդ մարդկան շրջեցար, եւ որք ընկալանն զքեզ՝ եաուր |136ա| նոցա իշխանութիւն որդիս Աստուծոյ լինել, ի ձեռն վերստին ծննդեանն զորդեգրութիւն*[6] *մեզ չնորհեցեր*[7]*, ընդունողս արարեր զմեզ սուրբ անուանդ քո, եւ փրկեցեր զմեզ ի բռնութենէ բանսարկուին՝ առ քո արքայութիւնդ: Դո՛ւ ես Տէր Աստուած ամենեցուն, որ ոչ կամեցար արեամբ ուխտիցն սրբել զպղծեալսն, այլ իւղովք սրբովք եաուր երկիւղածաց քոց նշան, կնքելով զհոգւոց մերոց երակս ի ձեռն Հոգւոյդ Սրբոյ: Տո՛ւր մեզ, Տէ՛ր, չնորհս առ ի սպասաւորութիւնս յայս, որպէս եաուր հաւատարիմ ծառային քո Մովսեսի*[8] *եւ աւրինադրին Սամուելի, եւ Յովհաննու ընտրելոյ քո, որք մի ըստ միոջէ բարեգործք եղեն յազգս իւրեանց: Նոյնպէս եւ զմեզ արժա-*

[1] *Բ > եւ*
[2] *Բ > զայս*
[3] *Ա որդւոյ*
[4] *Բ իմաստնացուսցես*
[5] *Բ է] էին*
[6] *Բ զորդէգրութիւն*
[7] *Բ չնորհելով*
[8] *Բ մովսէսի*

նաւորեսցես, Տէ՛ր, լինել սպասաւոր նորոյ ուխտիս, աւծանել սովաւ զժողովուրդ քո, զոր ստացար արեամբ միածնի քո՝ լինել նոցա հաւատ Քրիստոսի քո, ի քահանայութիւն եւ ի թագաւորութիւն, յազգ սուրբ, ժողովուրդ սեփհական, որպէս զի մերկացեալք զամբարշտութիւն[1] *եւ զաշխարհական զցանկութիւն, որպէս զի մեռցի մեղաց, եւ կեցցեն արդարութեանն, զգեցեալ զսրբութիւն, առաջակայիւքն հանդերձ որ գալոցն է ի ձեռն աւծման եւզոյս այսորիկ: Արդ, եղիցի Տէր զաւրութեանց ամենասուրբ Հոգովդ քով եւզս այս եւզ ցնծութեան եւ եւզ Հոգեւոր, զգեստ լուսաւոր*[2]*, աւծումն թա|136բ|գաւորական*[3]*, սրբութիւն հոգւոց եւ մարմնոց, հոգեւորական չնորհ, պահապան կենաց, կնիք ամրութեան, զէն հաւատացելոց, նահատակ յաղթող ընդդէմ չարին բռնութեանցն գործոց, աւթոց փրկութեան*[4] *եւ ցնծութիւն սրտից եւ ուրախութիւն յաւիտենական, զի որք աւծցին*[5] *սովաւ՝ վերստին իւղովս այսուիկ ծննդեամբ, երկիւղածք լիցին յԱստուածոյ եւ աներկիւղ ի հակառակողէն, եւ առաջի կալով քեզ յաւուրն դատաստանի, փայլեսցեն իբրեւ զաստեղս երկնից բազմութեամբ՝ ի պայծառութիւն սրբոց, ոչ ունելով արատ ինչ կամ աղտեղութիւն, այլ ընկալցի զյաւիտենական զհանգիստն ի գործս արդարութեան, հաստատել ի պարգեւ չնորհացս այսորիկ, եւ ընկալցին զյաղթութեան նշանակ վերին կոչմանն՝ ողորմութեամբ եւ գթութեամբ Քրիստոսի քո, որում վայել է.*

Քարոզութիւն ի վերայ աւծման իղոյն.

ՄԻԵ. *Վասն գտանելոյ մեզ զչնորհս եւ զողորմութիւն առաջի Տեառն զՏէր աղ*[6]*.*

Վասն ընդունելի լինելոյ աղաչանաց որպէս զխունկ առաջի Տեառն զՏէր աղաչեսց[7]*.*

Վասն առաջիկայ եւզոյս զ Տէր.

Վասն զի աւրհնելով աւրհնեցի եւ կեցուսցէ զմեզ ամենայն չնորհիւ[8] *եւ Հոգով Սրբով զՏ[էր]*[9]*.*

Վասն զի եղիցի ամենեցուն որ տեառնագրին սովաւ՝ գտցեն զցնծութիւն եւ զգեստ լուսաւոր զՏէր աղ.[10]

[1] *Ա զամպարշտութիւն*
[2] *Ա զգեստ լուսաւոր <զգեստ լուսաւոր>*
[3] *Ա թա|136բ|<թա>գաւորական*
[4] *Բ փրկութիւն*
[5] *Բ աւծանին*
[6] *Ա > զտէր աղ.*
[7] *Ա > զտէր աղաչեսց*
[8] *Բ չնորհի*
[9] *Բ > զտ.*
[10] *Ա զ.] զտէր աղ.*

Եւ եւս. եւ յաղագս սրբոյ եպիսկոպոսապետիս մերոյ կենաց եւ արդարութեան սորա գՏէր[1].

Զանձինս ողորմեաց.

Եւ եպիսկոպոսապետն ասէ զաղաւթս զայս.

ՄԻԶ. *|137ա| Տէր Աստուա՛ծ զաւրութեանց, թագաւոր յաւիտենական Տէր մեր եւ փրկիչդ Յիսուս Քրիստո՛ս, որ եղէ աւրհնեալ յաւիտեանս յաւիտենից, խնդրեմք ի քէն եւ աղաչեմք, առաքեա՛ յեւղս յայս աւծութեան գՀոգիդ Սուրբ, գՀոգի չնորհաց, գՀոգի*[2] *աւրհնութեան եւ աւրհնե՛ա ամենայն Հոգեւոր աւրհնութեամբ քով, ի ձեռն կենդանարար եւ ամենայաղթ խաչիւդ քով, զոր չնորհեցեր ի պահպանութիւն եւ ի փրկութիւն*[3] *երկրպագուաց քոց, որպէս զի եղիցի սա ամենայն հաւատացելոց ժողովրդեան քո՝ հիւանդաց եւ ախտացելոց*[4] *ի բժշկութիւն, յաւծումն սրբութեան, յաւծումն կենացն անլուծիցն*[5]*, յաւծումն պարգեւաց Սուրբ Հոգւոյդ, եւ առհասատչեա արքայութեանդ երկնից, յողորմութիւն լուսոյ ճշմարտութեանդ, ի կեանսդ յաւիտենական, զի յամենայնի փառաւորեսցուք զքեզ՝ Հայր եւ Որդի եւ Սուրբ Հոգի այժմ եւ միշ[ա]*[6]*:*

Եւ յետ այսորիկ առնու եպիսկոպոսն զաման եւղոյն եւ դնէ ի սարկաւագանոցին, հանդերձ սարկաւագաւքն: Եւ ելանէ առաջի սրբոյ սեղանոյն եւ ասէ զաղաւթս զայս.

ՄԻԷ. *Դարձեալ մատուցանեմք քեզ, թագաւո՛ր յաւիտենական, զաղաւթս մեր, կատարելով զքո տաւնիս խորհուրդ, եւ զպատուական կնիք սուրբ եկեղեցւոյ*[7] *քո զմեռոնս, որով կնքեմք զհոգոց մերոց երակս, անուամբն որ յառաջն իջանէր ի մուրսն Ահարոնի եւ ի գրապան զգեստու նորա:ք եւ այժմ, Տէ՛ր, սուրբ եղիցիս, որ հաստատեցաւ յՈրդի |137բ| ճշմարիտ մատուցեալ ընդունի զեւղս, որ հերով գլխոյ իւրոյ ջնջեաց, զի չէր հնար զհրեղէն խորհուրդս ի հողեղէն տեղիս մատուցանել, եւզ թափեալ է անուն քո, ասաց Գիր, վասն այսորիկ աւրհորդք սիրեցին զքեզ [Երգ· Ա· 2], զի նշան է մարգարէական, քահանայական, թագաւորական, խորհուրդ ճշմարիտ լի հաւատով, արդարեւ կնիք, որով տաս երկիւղածաց քոց նշան, փախչել յերեսաց աղեղան չարին, զի արժան է վասն այսորիկ զառաջին կերակուրն տղայոցն մատուցանել, որպէս հաւատարիմք*

[1] *Բ զտէր + զանձին ողոր.*
[2] *Բ 'ւ զՀոգի*
[3] *Ա > ի փրկութիւն*
[4] *Բ ախտաժէտաց*
[5] *Բ անլուծից*
[6] *Բ > եւ միշ.*
[7] *Բ եկեղեցոյ*

որ ի քեզ մերձաւորին, եւ զաստուածային խորհուրդն ընդունելոց էին, յառաջ քան զհաստատուն եւ զկատարեալ կերակուրն սրբոյդ գկաթն նորածնունդ ժողովրդեանն որ ի քեզ հաւատացին, եւ պատրաստելով որպէս կաթն մատուցանեմք, զի ամենեքեան որք[1] *առնուցուն ի սմանէ, արժանի լիցին ընդունել զհաստատուն կերակուրն, զճշմարիտն եւ զերկնայինն, չնորհաւք միածնի Որդոյ քո՝ սիրելոյ՝ Տեառն մերոյ եւ փրկչին Յիսուսի Քրիստոսի, որում եւ ընդ որով քեզ՝ Հաւր եւ Սուրբ Հոգւոյդ վայել են փառք:*

Խաղաղութիւն ընդ ամենեսեան]*[2]*:

Ընկա՛լ եւ զայս մեր զաղաչանս, Քրիստոս թագաւո՛ր, խոնարհեցո՛ զունկն քո ի խնդրուածս մեր, եւ առաքեա՛ զողորմութիւն քո ի գործս ձեռաց քոց, անտես առնելով զմեղս մեր, զարձո՛ զմեզ առ Աստուած փրկիչ մեր եւ երեւե|138ա|ցո՛ զերեսս քո ի մեզ, եւ կեցցուք, զի քո է իշխանութիւն եւ զաւրութիւն եւ փառք յաւիտեանս:

Սրբոյն Աթանասի եպիսկոպոսի Աղաւթք ի վերայ աւծման.

ՄԻԸ. *Տէր Աստուա՛ծ ամենակալ, թագաւո՛ր զաւրութեանց, կարդամբ զմեծ եւ զամենազաւրանուն քո եւ աղաչեմք զքեզ, զի առաքեսցես յեւղս յայս զՀոգիդ չնորհաց՝ զՀոգի աւրհնութեան քո եւ արասցես զսա լինել զրահ արդարութեան առ ամենայն ազգմունս սատանայականս, եւ ի քակտումն ամենայն հակառակորդին զաւրութեան՝ ի տանջանս եւ ի հուր եւ ի սատակումն ամենայն պիղծ հոգւոց, եւ ի հալածումն չարին, եւ ի ջնջումն բոլոր մնացորդաց կռապաշտութեանց, եւ ամենայն սնոտի պաշտամանց: Եղիցի հաւատացելոց քոց ի սրբութիւն եւ ի փրկութիւն, եւ ի հաստատութիւն աստուածպաշտութեան, ի ձեռն Տեառն մերոյ եւ փրկչին Յիսուսի Քրիստոսի, զի յամենայնի փառաւորել արժանի լիցուք զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ [Հոգի]*[4]*:*

[1] *Բ որ*
[2] *Բ ամենեցուն] ընդ ամեն.*
[3] *Բ զզամենազաւր*
[4] *Բ զորդ.] զորդի եւ զսուրբ. Բ այլ ձեռքով՝ լառն թափուր եւ զաւրճանայ քանզի լոյս*

ՅԱԻԵԼՈՒԱԾ Դ.

«ԿԱՐԳԱԻՈՐՈՒԹԻՒՆ ԱՒՐՀՆՈՒԹԻՒՆԱԲԵՐ ՅՈՒՅԱԿԻ» (ՄԱՇՏՈՑ ԾԻՍԱՐԱՆԻ)

Այս բնագիրը սերտ առնչութիւն ունի մեր խնդրի հետ, որ է՝ Հայ եկեղեցու ծիսարանի հին, սկզբնական տարրերակի ընդգրկման հնարաւոր չափով պարզումը, այս դէպքում նաեւ ծիսարանի քննութեան աշխատանքի հետագայ ընթացքի աղբիւրագիտական հիմքի յստակեցումը: Ուստի թռուցիկ ակնարկով պատկերենք գիտութեան մէջ այս բնագրի խնդիրների արծարծումը.

Յընթացս Մովսէս Խորենացու վաստակի գնահատութեան Գ. վ. Զարբհանալեանը գրել է. «ՅՕրհնութիւնաբերՙ յուցակի կը տեսնենք հետեւեալ յիշատակագիրը. «Երանելի Մովսէս թարգմանիչ, որ էր գրիչ սրբոյն Սահակայ՝ որդւոյ սրբոյն Ներսիսի, յորմէ եւ առաքի յերրորդ ամի գիւտի հայերէն գրոց ի Նազիանզ՝ յաթոռ Աստուածաբանի, եւ բէրէ անտի գՍերմնօրհնէքն դկալի եւ գհնձանի՝ գշարադրեալն յԱստուածաբանէն ի հինգերորդ ամի հայրապետութեան իւրոյ»: Դարձեալ նոյն Մովսէս յերեքտասաներորդ ամի թարգմանութեան սրբոյն Սահակայ՝ կարգի գրաւ, կ'ըսէ յուցակը, գկանոնս օրհնութեան այլեւայլ իրաց, գորս ի զանազան կողմանց բերեր էր»[1]: Միաժամանակ, նոյն գրքի «Պատկեր հայ գպրութեան ըստ իւրաքանչիւր դարուց» ցանկում Խորենացու անուան ներքոյ կարդում ենք. «Մեկնութիւն կարգաց եկեղեցւոյ (անհարազատ)»[2]:

Նոյն հարցն արծարծել է նաեւ Ղեւոնդ վ. Ալիշանը. «Մովսիսի ընծայուած մակդրաց մէջ Ս. Սահակայ գրիչ կամ դպիր մի եւս յիշեցինք, որ դա մեծ հայրապետին առաջնորդութեամբ կարգադրեր է մեր Մաշտոց գրոց կանոնները, որոնց ցանկ մը այլ գրեր է, որ կ'ըսուի «կարգաւորութիւն» Օրհնութիւնաբեր Յուցակի» եւ կը պտնուի հին ձեռագիր Մաշտոցից վերջը կամ սկիզբը դրուած. եւ այս, արդարեւ, մեծ գործ մի է (Մաշտոցն) եւ արժանի մեծահամբաւ ընելու իր կարգաւորողը, եթէ՛ է եւ եթէ՛ ոչ Մովսէս ոմն: Այդ գրոց շատ օրինակաց մէջ միայն Մովսէս անունն յիշուի. բայց ոմանք մականուամբ կամ հայրենեօք կիւրեննացի գրեն, որ հաւատալի չէ. կայ այլ որ որոչ Խորենացի գրէ... Արդ, եթէ այդ Մովսէս գրիչն Ս. Սահակայ՝ էր Խորենացին, շատ երիտասարդ եղած պիտի ըլլայ ի սկզբան կարգաւորութեանն, բայց աւելի նշանելին այս է, որ շատ յաջող եւ հանճարեղ երիտասարդ մի եղած պիտի ըլլայ, եւ յարմար է այն գաղափարին՝ զոր հասարակօրէն ունիմք Խորենացւոյ վրայ, եւ որոյ վկայեն իր գրուածքն»[1]:

Դժուար է ենթադրելը, թէ բնագրի քանի՛ օրինակ են ունեցել Մխիթարեան վարդապետները[2], եւ անկախ նրանից, որ մեր ունեցած բաւական մեծ նիւթով Խորենացու հեղինակութեան հարցն աւելի է ամրապնդւում (տե՛ս ստորեւ), մենք եւս այս խնդիրն առկախ ենք թողնում («Կարգաւորութիւն» ցուցակի հեղինակի, ստեղծման ժամանակի, նրա հաղորդումների վաւերականութեան քննութեան նպատակ չունենք), որովհետեւ մեզ համար կարեւորը բնագրի բովանդակութիւնն է, որի համառօտ եւ ճշգրիտ գնահատութիւն-բնորոշումը կրկին քաղում ենք Ալիշանից. «Կանոնաց կամ օրհնութեանց կարգաւորութիւնն (զոր այլեւայլ թարգմանիչք յայլեւայլ քաղաքաց Յունաց՝ ի գործոց Ս. Հարց բերած են), Հայկական գրերու գիւտէն եւ թարգմանութեանց սկսելէն քանի մի տարի վերջը սկսուած կ'ըսուի, եւ իբրեւ տասնեւհինգ տարեօք տեւած. ըսել է որ երբ հետ գհետէ թարգմանութիւնք կանոնաց բերուէին՝ յարմարութեամբ դասաւորուելով ձեւանար այդ Օրհնութիւնաբեր գիրքն[3], որ յետոյ Մաշտոց կոչեցաւ: Այդ կարգաւորութիւնն

---

[1] *Հ. Գ. Զարբհանալեան, Հայկական հին դպրութեան պատմութիւն (Դ-ԺԳ. դար), Բարձրագոյն դպրոցաց համար, Վենետիկ, 1886, էջ 365:*

[2] *Նոյն տեղում, էջ ԺԸ.: Զարբհանալեանը (էջ 261-2) համոզուած է, որ Մեսրոպ Մաշտոց վարդապետը «եղաւ ազգային եկեղեցական ծիսարանը կարգի դնող, այլ եւ այլ ազօթքներու թարգմանութեամբ կամ ինքնագիր յօրինմամբ, որ եւ իր մականուամբը Մաշտոց կոչուած է: Գեղեցիկ եւ իր տեսակին մէջ անհամեմատ երկասիրութիւն մը, որուն մէջ հաւատար կը փայլին յօրինողին աստուածապաշտ եռանդը, բնատուր հանճարը եւ մաքուր լեզուն»:*

[1] *Հայապատում. Պատմիչք եւ Պատմութիւն Հայոց, Յօրինեաց Հ. Ղեւոնդ Վ. Մ. Ալիշան, Հատոր Ա., Վենետիկ, 1901, Պատմիչք Հայոց, էջ 119 (օգտագործել ենք գրքի փոքրագիրը՝ երկհատոր, չորս գրքով տարբերակը. սրան համապատասխանում է մեծագիր միահատոր տարբերակի՝ հտ. Բ, էջ 188-9. այսուհետեւ՝ Հայապատում, Ա.):*

[2] *Մի այլ տեղում Ալիշանը, օրինակների շատութիւնը չեշտելով, նրանց քանակը կրկին չի որոշակիացրել. «Թէ՛ ի կարգի Մաշտոցաց ոմանց եւ թէ՛ առանձին յայլ գիրս՝ գտնուի այս յուցակս, որ եւ ըստ շատութեան ձեռագիր օրինակաց՝ շատ այլեւայլութեամբ տարբերի՝ յանուանս եւ ի ժամանակս թարգմանութեանց» (Հայապատում, Բ., էջ 418, ծ. 1):*

[3] *Ալիշանն ունի շատ ուշագրաւ մի դիտարկում. «Այն ամենապատուական եւ ամենահարեւոր Գիրքն՝ որ հիմայ ամենուն ծանօթ է Մաշտոց կոչմամբ, ըլլայ Ս. Մեսրովպայ երկրորդ անուամբ, ըլլայ հին սրբազան նշանակութեամբ, երեւի, թէ՝ մեր*

Մովսիսի ձեռօք եղած է իբրեւ յամի 431. յետոյ Մանդակունին եւ այլք աւելցուցեր են նոր կանոններ»[1]: Այսպիսով, «Կարգաւորութիւն» բնագ.361րի մէջ թուարկուած են խորագրերը մեր ծիսարանի բոլոր այն կանոնների, որոնք 6. դարի ընթացքում թէ՛ դրսից բերուելով թարգմանուել են աստրերէնից ու յունարէնից եւ թէ՛ ստեղծուել են մեր եկեղեցու հայրերի ձեռքով:

Ուրեմն, կարեւորը պարզելն է, թէ ի՛նչ կանոններ են յիշատակուած կարգաւորութեան մէջ, ապա նրանցից որո՛նք են առկայ Մաշտոցի մեր հրատարակութեան հիմք երկու ձեռագրում եւ որո՛նք՝ բացակայ: Այս նպատակի իրագործման համար Մաշտոցեան Մատենադարանի ձեռագրերի մէջ փնտրեցինք եւ գտանք փոքրածաւալ այս բնագրի 20 օրինակ[2] եւ որոշեցինք նրանց տուեալները համադրել մեզ յայտնի եւ ստորեւ թուարկուող 7 տպագիրների բնագրերի հետ, ապա այդ ամէնի հիման վրայ կազմել «Կարգաւորութեան» մէջ յիշատակուած կանոնների ցանկը, ի վերջոյ սա էլ համեմատել մեր բնագրի գլխացանկի հետ:

«ԿԱՐԳԱԻՈՐՈՒԹԵԱՆ» ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

1. Գրիգոր Տաթեւացի, Գիրք Հարցմանց. Հատոր Թ., սրբակ ԾԶ., կ. Պոլիս, տպ. Աստուածատուր Կ. Պոլսեցւոյ, 1729, էջ 658-9 (ոծը-ոծթ.)[3].

2. Գիրք Մեծ Մաշտոց կոչեցեալ, յորում հաւաքեալ աւանդին ըստ մեծի մասին կարգք եւ կանոնք արարողութեան Հայաստանեայցս սուրբ եկեղեցւոյ, Կ. Պոլիս, տպ. Պօղոս Յովհաննիսեանի, 1807, էջ 2-3. նախաբանի («Յառաջաբանութիւն ինչ զՄիսարանէս») մէջ գրուած է. «Քանզի գտեալ եղեւ ուրեք գրուած ինչ, որոյ մակագիր էր այսպէս». բերուած է բնագիրը, իսկ վերջում՝ եզրակացութիւն. «Յայտնեմք իմանի, թէ ի ժամանակս սրբոյն Սահակայ եւ երանելւոյն Մաշտոցի, որ նա ինքն է Մեսրոպ, եւ աշակերտաց նոցա՝ մերս թարգմանչաց, կարգաւո-

սուրբ Թարգմանիչք գիրքը կարգաւորողք՝ կոչեր են Օրհնո-ւիւ-նաբեր, ոպէս եւ է իսկ. եւ անոր աղօթից կամ Կանոնաց հեղինակաց եւ թարգմանչաց ցանկ մ'այլ կարգելով՝ կոչեր են զայն Օրհնո-ւիւ-նաբեր Յո-ցաւ» (Հայսպատում, Ա., էջ 418, ծ. 1). ըստ այսմ՝ մեր ծիսարանի սկզբնական անունն էր՝ Օրհնո-ւիւ-նաբեր գիրք:

[1] *Հայսպատում, Ա., էջ 119:*

[2] *Վստահ ենք, որ մեր հաւաքածուի ընդարձակ ցուցակի կազմութեան աշխատանքների հետագայ ընթացքի հետ բացայայտուելու են ուրիշ ձեռագրեր եւս:*

[3] *Մեր խնդրի առիթով Տաթեւացու Հարցմանց գրքի տասնեակ ձեռագրերին անդրադառնալն աննպատակայարմար եւ հեռուն տանող ենք համարում, որովհետեւ սա արդէն նոյն Տաթեւացու հանրագիտական այդ գործի բնագրի քննութեան հարցերից է:*

բեցաւ սոյն Գիրք եկեղեցական օրհնութեանց. եւ կոչեցաւ յանուն սրբոյն Մաշտոցի, այսինքն՝ Մեսրոպայ-Մաշտոց» (էջ 3): Ակնյայտ է, որ այս տպագիրը հիմնուած է մէկ ձեռագրի վրայ:

3. Հ. Գ. վ. Զարբհանալեան, Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց, դար Դ-ԺԳ., Վենետիկ, 1889, էջ 245-8. «Եկեղեցական պաշտամանց գիրք» խորագրի ներքոյ նկատելով, որ «Սուրբ Գրոց թարգմանութենէն ետքը՝ եկեղեցական բարեկարգութիւն եւ հասարակաց հոգեւոր պաշտամանց անհրաժեշտ հարկ եւ կարգաւորութիւնն, պէտք էր որ գրաւէր սրբոց Թարգմանչաց աստուածասէր եւ աստուածախոհ միտքն ու սիրտ, եւ նպատակ ըլլար իրենց նախապատիւ փութաջան վաստակոց առ այն: Ինչուան առ մեզ հասած հետաքննական ցուցակ մը կը հաւատարմացնէ թէ եւ յայնմ,- իրենց պաշտաման եւ կոչման էական գործոյն մէջ,- ամէն եռանդ, սիրտ ու աշխատանք եբեւցուցին», ապա «Մէջ բերենք նախ այն ցուցակը, որ կը կոչուի, եւ որ ինչուան առ մեզ հասնելով՝ այլեւայլ կերպարանափոխութիւնք, ու երբեմն նաեւ ոչ այնչափ հարազատ յաւելուածներ ընդունած է. եւ յանուանէ կը յիշատակէ՝ ինչ որ եկեղեցական բարեկարգութեան ու պաշտամանց բարեզարդութեան համար պատշաճ եւ կարեւոր թարգմանութիւնք ի յունէ, ու երբեմն նաեւ յասորւոյն՝ թարգմանիչք մեր հետերնին բերեր էին ի Հայաստան»: Զորիցս «այլ օր.» բնորոշումով ներկայացրել է այլընթերցումներ, որով յայտնի է դառնում, որ ձեռքի տակ մէկից աւելի ձեռագիր է ունեցել:

4. Հայսպատում, Ա., էջ 418-23. «ՃԺԳ. Օրհնութիւնաբեր ցուցակն եւ թարգմանիչք». ունի համառօտ կամ ընդարձակ 25 ծանօթագրութիւն, որոնց զգալի մասն ըստ հարկի վերարտադրել ենք ստորեւ. գործածած ձեռագրերի մասին ծանօթութիւնների մէջ գրել է. «Ուրիշ Օ», որ է մէկ այլ ձեռագիր, «Ուրիշ ՕՕ» մէկից աւելի, իսկ Մովսէս (Խորենացի) անուան առաջին յիշատակութեանը վերաբերող ծանօթութեան (էջ 418-9, ծ. 3.) մէջ յատակ երեւում է 3 ձեռագրի գործածում:

5. F. N. Finck, Kleinere mittelarmenische Texte, Herausgegeben, mit Einleitung und glossar versehen.- *Հանդէս հայագիտութեան.* Zeitschrift für armenische Philologie, Erster Band, drittes Heft, Marburg (Hessen), *1902, p.218-9. Հրատարակել է Կարենեան Հ՝ր 1654 կամ Էջմիածնի Հ՝ր 1696, որ է Մաշտոցեան Մատենադարանի ներկայիս Հ՝ր 1898 կամ մեր Ա ձեռագրից[1]:*

[1] *Հիմնականում հարազատ վերարտադրութիւն է, միայն՝ Ա.2ում «յԱնձիաձու»ի տեղն ունի «Նանձիանձու», Ա.6ում՝ «վասն ագապս»ի փոխարէն՝ «զասնագապս»:*

6. Յուցակ հայերէն ձեռագրաց Սուրբ Նշանի վանուց ի Սեբաստիա, կազմեց Թորգոմ արքեպ. Գուշակեան, Վիեննա, 1961, էջ 69-70. ըստ Սեբաստիայի Սուրբ Նշանի վանքի Հ՟ր 105 ձեռագրի (ներկայիս տեղն անյայտ կամ կորսուած)[1]*:*

7. Անգլերէն թարգմանութիւնը. Order and disposition of various titles.- Rituale Armenorum, Being the Administration of the sacraments and the Breviary Rites of the Armenian Church, Togheter with the Greek Rites of Baptism and Epiphany, Edited from the oldest Mss. by F. C. Conybeare, Oxford, At the Clarendon Press, *1905, էջ իէ-լԱ.*[2]*, հիմնուած է մեր Ա$_1$ ձեռագրի (ա) վրայ, որուն տակում նշելով տարբերութիւնները հետեւեալների. բ՝ Զարբհանալեանի տպագրածը (մեր Ն), գ՝ Մխիթարեան վենետիկի ձեռ. Հ՟ր 693 (հրապարակուած նկարագրութիւն չկայ), դ՝ նոյն Մխիթ. վենետիկի ձեռ. Հ՟ր 57/240*[3]*, ե՝ Պոլսի 1807ի տպագիրը (մեր Յ), զ՝ Ֆ. Ֆինկի տպագիրը (մեր Ա) եւ է՝ Տաթեւացու Հարցմանց դրքի օրինակը (մեր Դ)*[4]*:*

Ուշագրաւ է, որ 3-4րդ տպագիրների պատրաստողներին առաջին երկուսը յայտնի չեն եղել, իսկ 5րդում բնագիրը տպուած է առանց որեւէ մեկնաբանութեան[5]*:*

---

[1] Բացի 5րդից, միւս տպագիրների հիմք ձեռագրերը մեզ անյայտ են, ուստի եւ՝ ո՛չ հաստ. ըստ այսմ՝ այս հրապարակում-քննութեան մէջ սրանք գործածել ենք որպէս իրենց հիմք ձեռագրեր:

[2] Այսպէս՝ հայերէնի ենք տառադարձում լատինատառ էջահամարները, որոնք այս դէպքում են՝ XXVII-XXI:

[3] Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի վենետիկ, հտ. Բ., Յօրինեց Հ. Բ. վ. Սարգիսեան, a Venice, 1924, էջ 590-1. Ոսկեփորիկ Ա.-ԺԵ-ԺԶ. դդ. 319 թերթ, թուղթ, 19x14,5. միասիւն, բոլորգիր, 26-27 տող. 119բ-20բ կարգաւորութիւն ցուցմանց աւրհնութիւնաբեր ցուցակին, թէ ով ոք կամ ուստի եւ կամ յորում ժամանակի հարապետացն են արարեալ զկարգ աւրհնութեանսաբեր ցուցակիդ, եւ թէ ով ոք եբեր ի Հայաստան աշխարհս եւ որոց հրամանաւ կամ կարգաւ ճառեցին: Երանելոյն Մովսիսի Խորենացոյ թարգմանչի, որ էր գրիչ սրբոյն Գրիգորի հակաւ հայրապետին Հայոց, որդոյ սրբոյն Ներսեսի, յետ ձԺ. ամի սրբոյն Գրիգորի եղեւ սկիզբն թարգմանութեան ի հայերէն լեզուս. յերկրորդ ամի թարգմանութեան առաքէ սուրբն Սահակ ի Անձիանձոյ քաղաք եւ ետ բերել զՍերմնաւրհնէքն... իսկ վան Հիմնարկութեան սրբոյ տաճարի եւ ժամահար աւրհնելոյ, Սկի եւ մաղթմամ, եւ Գիրք եւ Կնունք եւ Խաչաւրհնէք եւ Պատկ եւ զ'Քառասնորդացն երեք ժամերոցն քարոզն եւ զաղօթս՝ Մանդակունի է արարեալ, որ չորեքտասան թիւ էր սրբոյն Գրիգորէ: Այսքան, եղբայր գիտնական, յորժամ կամիցիս գիտել զցուցակ Մաշտոցին»: Ծնթ. Բ. վ. Սարգիսեանի. «Ձեռագիրս ունի ուրիշ օրինակներէ նշանաւոր տարբերութիւններ. օր. իմն, «իսկ Սբեմաւրհնէքն Թէոդորոսի եպիսկոպոսի է արարեալ (ի) Սիդարեպան Փիլացւոց քաղաքին» եւլն». ըստ այսմ սա եւս մեր որեւէ օրինակի հետ կատարելապէս չի նոյնանում:

[4] Որչափ գիտենք՝ Մաշտոցի հետագոտողներից միայն Ֆ. Կոնիբիրին է յայտնի եղել, որ Գրիգոր Տաթեւացին այս բնագիրը նոյնութեամբ ներառել է իր Հարցմանց դրքի մէջ:

[5] Վեցերորդի միայն հպանցիկ յիշատակում տե՛ս Ա. Արեւշատեան, «Մաշտոց» ժողովածուն, էջ 20, ծ. 21:

Ի վերջոյ յիշենք, որ Ա. Արեւշատեանը, 2-4րդ տպագիրների եւ ձեռագրերի՝ ստորեւ դրուած թուարկման Բ եւ Ը օրինակների հիման վրայ, գործածելով նաեւ պատմագրական եւ այլաբնոյթ աղբիւրների հաղորդումներ, պատկերել է Մաշտոց ժողովածուի «կազմաւորման եւ զարգացման փուլերը»[1]*: Նրա արածը համարում ենք ներկայիս համար բաւարար-նախնական, որովհետեւ համոզուած ենք, որ այս հարցերը պէտք է քննել ձեռագրական եւ ընդհանրապէս աղբիւրագիտական շատ աւելի մեծ եւ համակարգուած նիւթի հէնքի վրայ:*

* * *

Տպագիրների եւ ձեռագրերի (5 եւ 20, ընդամէնը, 25 օրինակ) թուուցիկ համեմատութեան որոշ փորձերից յետոյ տեսանք, որ համեմատելի են միայն Ա եւ Ա$_1$, Բ եւ Բ$_1$ օրինակները[2]*, մնացեալների մէջ կան նոյնիսկ հաղորդումների բաւականաչափ շատ եռուառաջութիւններ, շարահիւսական դրափոխութիւններ, աւելի կամ պակաս բառեր եւ դարձուածներ, քիչ չեն նաեւ գրչական-իմաստային աղաւաղումներն ու խճողումները. միով բանիւ՝ համոզուեցինք, որ ձեռագրերն ընդունուած սովորական ձեւով համամատելն անհնար է*[3]*. այստեսակ համեմատութեամբ ստանում էինք մի չարադրանք, որ բուն մասում ունէր 2-3 թեամբ ստանում էինք մի չարադրանք, ուր կանոններին վերաբերող, իսկ տողատակին խճողուն մի պատկեր, ուր կանոններին վերաբե-*

---

[1] Ա. Արեւշատեան, Հայկական ծիսարանի կազմաւորման եւ զարգացման փուլերը, Պատմաբանասիրական հանդէս, 1982, Հ՟ր 3, էջ 144-50 (էջ 145-7 բնագիրն ըստ մեր Ը ձեռագրի). Ա. Արեւշատեան, «Մաշտոց» ժողովածուն, էջ 19-40 (էջ 19-21՝ բնագիրն ըստ մեր Բ. ձեռագրի). սրանց մէջ կան նաեւ խնդրին վերաբերող գրականութեան օգտակար յղումներ եւ թուարկումներ: Մեր Բ ձեռագրի հիման վրայ է արուած նաեւ Արփենիկ Ղազարոսեանի հրատարակութիւնը. Մաշտոց Եղվարդեցի կաթողիկոս, «Էջմիածին», 1991/Ա-Բ-Գ., էջ 115-6, ծ. 40: Ա. Արեւշատեանի հրապարակումների մէջ ընթերցման վրիպումներ եւ ձեռագրերի հետ կապ չունեցող ինքնահնար բառեր շատ կան, երրորդում էլ թէ՛ մանր վրէպներ կան եւ թէ՛ վերջին նախադասութիւնը չկայ. այդ խոտորումներն այստեղ արձանագրելն անիմաստ համարեցինք, որովհետեւ արել ենք նոյն ձեռագրերի նոր, ճշգրիտ վերարտադրութիւններ:

[2] Ենթահամարով ձեռագրերի դոյութիւնն իմացանք աշխատանքիս աւարտի ընթացքում:

[3] Ա. Արեւշատեանը գրել է, թէ կարգաւորութիւնը «յաճախ հանդիպում է նաեւ Ոսկեփորիկներում եւ ժողովածու կոչուող գրքերում, որպէս ինքնուրոյն պատմագրական միաւոր», այստեղ իսկ՝ որպէս 16րդ ձանօթութիւն, «եւ այլն» աւարտով թուարկել է 16 ձեռագիր, որոնցից հինգը (ձեռ. Հ՟ր 142, 179, 341, 577, 582), սակայն, կարգաւորութիւնը չունեն (տե՛ս նրա «Մաշտոց» ժողովածուն..., էջ 19): Նաեւ կարծում է, թէ «ցուցակը յայտնի է հիմնականում երկու խմբագրութեամբ» (նոյն տեղում, էջ 19, ծ. 17), ըստ այդմ էլ արել է վերը յիշատակուած իր երկու հրատարակութիւնը:

բոլ հաղորդումներն այնքան էին խառնուած, որ քիչ բան էր հասկացուում: Այսինքն՝ համոզուեցինք, որ բառական համեմատութիւնն այս բնագրի դէպքում բոլորովին անտեղի եւ անիմաստ է, աւելին՝ յիշատակուած կանոնների պատկերը պարզելու մեր հիմնական նպատակին խանգարող, ուստի որոշեցինք նոյնաբար՝ իրար հետեւից բերել բոլոր օրինակների չարագրանքների նոյնիմաստ նախադասութիւնները:

Ըստ այսմ՝ բոլոր օրինակները դասաւորեցինք ժամանակագրական կարգով[1] եւ միասնական-միանման ձեւով մշակեցինք բոլորի կէտադրութիւնը. այսինքն՝ երբեմն անտեսելով ձեռագրերում առկայ տրոհումները (հիմնականում նախադասութիւնների գլխատառերով սկիզբ), հնարաւոր միակերպութեան բերեցինք բոլոր օրինակների չարագրանքները եւ ըստ այդմ բոլորի նախադասութիւնները համարակալեցինք կարգային պայմանանիշերով եւ համարներով՝ Ա.1... Ա.13, Շ.1... Շ.12:

Վերջում ըստ մեր բնագրի կարգի, առանձին մանրամասների յիշատակումով, դրել ենք վկայուած կանոնների ցանկը, ստեղծելով բոլոր հաղորդումների համադիր պատկեր-տեսութիւնը, ապա արել ենք որոշ նախնական դիտարկումներ[2]:

ՕԳՏԱԳՈՐԾՈՒԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԸ ԵՒ ՏՊԱԳԻՐՆԵՐԸ[3]

Ա - ԺԳ. դ. վերջ, ձեռ. Հ՝ր 1898. ժողովածու. [Կիլիկեան Հայաստան], գրիչ՝ [Վասիլ][4], ստացող՝ Յովաաաի վրդ, 280 թերթ, մագաղաթ (թ. 280 թուղթ), 23,6x18. միասիւն, բոլորգիր, 27 տող. բնագիրը՝ 279բ-80բ (թ. 280՝ ԺՀ. դ. լրացում-վերականգնում). հատուածք՝ 1-13.

Ա1 - 1287 թ., Վատիկանի Cod. Vat. Arm. *Հ՝ր 3. ժողովածու. [Կիլիկեան Հայաստան], գրիչ՝ Ռօբէն, 407 թերթ, մագաղաթ, 22,7x16,6. միասիւն, բոլորգիր, 25 տող. բնագիրը՝ 301բ-2բ[1]. հատուածք՝ 1-13.*

Բ - 1300 թ., ձեռ. Հ՝ր 2607, ժողովածու[2], [Կիլիկեան Հայաստան], գրիչ եւ ստացող՝ Թորոս քհյ, 405 թերթ, 25,5x18,5. միասիւն, բոլորգիր, 31 տող, բնագիրը՝ 356ա-7ա. հատուածք՝ 1-12.

Բ1 - 1284 թ., ձեռ. Հ՝ր 4207. Ատանա, գրիչ՝ Կոստանդին Քուռաթ (Թուռաթ), ստացող՝ պարոն Օշին, 385 թերթ, թուղթ, 27x17. երկսիւն, բոլորգիր, 28 տող. բնագիրը՝ 118ա-9բ. հատուածք՝ 1-12. Բ ձեռագրի համեմատ ունեցած տարբերութիւնները հիմնականում ուղղագրական են. նկատելի իւրայատկութիւն՝ է-ի փոխարէն սովորաբար ունի ե, որ արձանագրել ենք միայն այլ տեսակի տարբերութիւնների մէջ.

Գ - 1315 թ., ձեռ. Հ՝ր 3651. ժողովածու, Ս. Կարապետի վանք (Տարօ՞ն), գրիչ՝ Առաքել աբեղ, ստացող՝ Մկրտիչ քհյ. 404 թերթ, 16,5x11,5. միասիւն, բոլորգիր, 24 տող. բնագիրը՝ 272բ-4ա. հատուածք՝ 1-13.

Դ - 1397 թ.[3], Գրիգոր Տաթեւացի, Գիրք Հարցմանց, կ. Պոլիս, տպ. Աստուածատուր կ. Պոլսեցւոյ, 1729, էջ 658-9 (ոծը-թ.), Հատոր Թ., պրակ ԾԶ., հատուածք՝ 1-14.

Ե - ԺԴ. դ.՞ չթուագրուած. հին բոլորգիր[4]. Սեբաստիայի Սուրբ Նշանի վանքի ձեռ. Հ՝ր 105. Մաշտոց, գրիչ՝ Սահակ գրչապետ, 189 թերթ,

---

1 *Տե՛ս* Codices Armeni Bybliothecae Vaticanae: Borgiani, Vaticani, Barberiniani, Chisiani, Schedis Frederici Cornwallis Conybeare adhibitis, Recensuit Eugenius Tisserant, Bybliothecae Vaticanae scriptor, Romae, Typis Poluglottis Vaticanis, MCMXXVII (1927), էջ 213. յօդ. 33 (ամբողջ նկարագրութիւնը՝ էջ 205-23). երախտագիտութեամբ յիշենք, որ շատ արժէքաւոր այս ձեռագրի պատճէնը (Մատենադարան, ժապաւէն Հ՝ր 1103) 1980 թ. ստացել ենք միլանաբնակ մեր հանգուցեալ բարեկամ Հրանտ Բամպակեանի հոգածողութեամբ:

2 Հիմնական նիւթն է Խոսրովու Անձեւացու Մեկնութիւն ժողովածուի մի քանի թուղթ եւ նման այլ մանր բնագրեր: Սրանից է տպ.՝ Ա. Արեւշատեան, «Մաշտոց» ժողովածուն, էջ 19-21:

3 Թուականը Հարցմանց գրքի գրութեան ժամանակինն է:

4 Սեբաստիայի ցուցակ, էջ 69. «Թէեւ թուականի մասին որ եւ է ծանօթութիւն չի պարունակեր, բայց գրչութեան ոճէն կը հասկցուի բաւական հին ըլլալը, գէթ ՝՚ի տեղ ՝ գիրը գործածութեան մէջ մտնելու շրջանին պատկանելով». «Նոյնութեամբ յառաջ կը բերենք հոս Լ.Զ. գլուխը, որուն սկիզբի եւ վերջի մասերն անընթեռնլի են եւ կորուած». ըստ այս բնորոշման եւ ձեռագրի գրչութեան «հին բոլորգիր» լինելու թուագրել ենք «ԺԴ՞. դ»:

1 *Տաթեւացու Հարցմանց գրքինն ըստ գործի գրութեան ժամանակի համարեցինք 1397 թ., Սեբաստիայի ձեռագրինը՝ նկարագրութեան թէական տուեալների համեմատ՝ ԺԴ. դ., իսկ 2-4րդ եւ 6րդ տպագրիների հիմքերի ժամանակի մասին տեղեկութիւն չունենալով՝ դրեցինք չարքի վերջում:*

2 *Վենետիկի ցուցակ, Գ., էջ 48. մեր Ա Մաշտոցի՝ «Յանկագրուած սոյն 47 կանոններէն 10-12ը նորագոյն գրչագիրներու մէջ Մաշտոց կաթողիկոսին վերագրուած են, որպիսիք են Ա. Ե. ԺԱ. ԺԴ. ԺԹ. ԻԱ. ԻԲ. ԻԳ. ԻԹ. Լ.Գ. Լ.Զ. եւ Խէ: Իսկ կարգաւորութիւն օրհնութիւնաբեր ցուցակին կոչուած հնագոյն յիշատակարանին մէջ ընդհատ կառակն, այս կանոնները՝ մասամբ երանաշնորհ թարգմանիչներու օրով, մաս մ'ալ հաւանօրէն Յովհան Մանդակունւոյ ժամանակ ի Հայս բերուած կ'աւանդուին»:*

3 *Հին է նաեւ ձեռ. Հ՝ր 750 (ԺԳ. դ.), որ ունի միայն խորագիրը. 176բ «Կարգաւորութիւն ցուցման Աւրհնութիւնաբեր կտակիս, թէ ուստի կամ ով ոք եւ յորում ժամանակի եւ ով ոք ի սուրբ Հայրապետացն արարեալ է ի կարգաց աւրհնութիւնաբեր կտակիս, եւ թէ ով ոք երեր ի Հայաստան աշխարհս, եւ այր հրամանաւ՝ կարգաւ ճառեցից. երանելին Մովսէս թարգմանիչ, որ էր գրիչ սրբոյն Սահակայ, որդւոյ սրբոյն Ներ/// (մնացեալը թափուած)»:*

4 *Գրչի անունը պարզել եւ թուագրումը ճշգրտել է կարէն Մաթեւոսեան, Հեթում կոռիկոսցու լրացումները Սամուէլ Անեցու ժամանակագրութեան մէջ.- «Էջմիածին», 2010/թ., էջ 50-51 (ամբողջ յօդուածը՝ էջ 48-61):*

22x15. միասիւն, հին բոլորգիր, 19 տող. բնագիրը՝ ձեռագրի Լ.Զ. գլուխն է[1]. հատուածք՝ 1-12.

Զ - 1402-1406 թթ., ձեռ. Հ՟Ր 2152. ժողովածու, Բաղէշ, գրիչ՝ անանուն (մեր բնագրի մասինը), ստացող՝ Կարապետ վրդ., 252 թերթ, թուղթ, 17,5x13,5. միասիւն, բոլորգիր, 37 տող. բնագիրը՝ 140աբ. հատուածք՝ 1-13.

Է - 1425 թ., ձեռ. Հ՟Ր 1114, ժողովածու, Զագաւանք, գրիչ՝ Ստեփանոս կր., ստացող՝ Դաւիթ վանահայր եւ Սարգիս կր., 210 թերթ, թուղթ, 16x12, միասիւն, բոլորգիր, 26 տող. բնագիրը՝ 105ա-6ա. հատուածք՝ 1-14.

Ը - 1473 թ., ձեռ. Հ՟Ր 958, Մաշտոց, Ուրծ գիւղ, գրիչ՝ Խաչատուր, ստացող՝ Մեսրոպ աբեղայ, 360 թերթ, 26,5-27x16,5-17. երկսիւն, բոլորգիր, 27 տող. բնագիրը՝ 258բ-9բ[2]. հատուածք՝ 1-13.

Թ - 1476 թ., ձեռ. Հ՟Ր 2335. ժողովածու, Երուսաղէմ, 311 թերթ, թուղթ, 17,2x12,5. միասիւն, բոլորգիր, 40 տող. բնագիրը՝ 84բ-5ա. հատուածք՝ 1-15.

Ժ - 1520 թ., ձեռ. Հ՟Ր 2543. ժողովածու, Ատանա, գրիչ՝ Սիմէոն Տրապիզոնցի, ստացող՝ Աւետիք. 205 թերթ, 15,5x11. միասիւն, բոլորգիր, 26 տող. բնագիրը՝ 170ա-1ա. սկզբից թերի՝ պակաս 1 էջ, անխորագիր, որի փոխարէն վերջին տողից մակաբերել ենք՝ 1. [Յուցակ Մաշտոցին], պահպանուած սկզբին էլ տուել ենք 3 համարը (2րդ չունի). իմա՝ 1, 3-13. հատուածք՝ 1, 3-13.

Ի - 1589 թ., ձեռ. Հ՟Ր 1770. ժողովածու, գրիչ՝ Աստուածատուր Պալիր, ստացող՝ Հայրապետ Զուղայեցի, 399 թերթ, թուղթ, 20,7x14,8. միասիւն, նոտրգիր, 26 տող. բնագիրը՝ 152բ-3բ. հատուածք՝ 1-14.

Լ - ԺԶ. դ., ձեռ. Հ՟Ր 972. Մաշտոց, 296 թերթ, 21x14. միասիւն, բոլորգիր, 19-22 տող, բնագիրը՝ 272ա-4ա. հատուածք՝ 1-14.

Խ - 1618 թ. ձեռ. Հ՟Ր 580. ժողովածու, գրիչ՝ Անդրէաս քհյ, 351 թերթ, թուղթ, 17,5x12,5. միասիւն, բոլորգիր, 23-25 տող. բնագիրը՝ 292ա-3բ. հատուածք՝ 1-13.

---

[1] Գաբեգին Ա. կաթողիկոս [Յովսէփեան], Յիշատակարանք ձեռագրաց, հատոր Ա. (ե. դարէից մինչեւ 1250 թ.), Անթիլիաս, 1951, էջ 98, ծ. 6. այս ցանկի մասին՝ «ուր մի յեսին մատենագրի կողմից կան տեղեկութիւններ Մաշտոց ծիսական գրքի այլ եւ այլ մասերի թարգմանութիւնների մասին»:

[2] Սրանից տպուած՝ Ա. Արեւշատեան, Հայկական ծիսարանի կազմաւորման եւ զարգացման փուլերը, ՊԲՀ, 1982/3, էջ 145-7 (ամբողջը՝ էջ 144-50):

Ծ - 1638 թ., ձեռ. Հ՟Ր 744, ժողովածոյ, Աղճայղալա, գրիչ, ստացող՝ Յովանէս, 259 թերթ, թուղթ, 13,3x10. միասիւն, նոտրգիր, 19 տող. բնագիրը՝ 57ա-9ա. հատուածք՝ 1-13.

Կ - ԺԷ. դ., ձեռ. Հ՟Ր 1775, ժողովածու, 211 թերթ, թուղթ, 21,5x15,5. միասիւն, նոտրգիր, 27 տող. բնագիրը՝ 103աբ, 137ա. հատուածք՝ 1-14.

Հ - ԺԷ. դ. ձեռ. Հ՟Ր 1887. ժողովածու, գրիչ եւ ստացող՝ Նազարէթ Ամիրասաթենց Զուղայեցի, 400 թերթ, թուղթ, 20.4x14,3. միասիւն, նոտրգիր, 23 տող. բնագիրը՝ 254ա-5բ. հատուածք՝ 1-12.

Ձ - ԺԷ. դ., ձեռ. Հ՟Ր 2168. ժողովածու, ստացող՝ խոճայ Պալի, 327 թերթ, թուղթ, 15x10,5. միասիւն, նոտրգիր, 22 տող. բնագիրը՝ 71աբ. հատուածք՝ 2-8.

Ղ - ԺԷ. դ. - ձեռ. Հ՟Ր 3260. ժողովածու, ԺԷ. դ., գրիչ՝ Մարկոս Նոբընծայ. 474 թերթ, թուղթ, 14,1x10. միասիւն, նոտրգիր, 17 տող. բնագիրը՝ 178բ-80բ. հատուածք՝ 1-14.

Ճ - 1709 թ., ձեռ. Հ՟Ր 603, ժողովածու, գրիչ՝ Դաւիթ աբեղայ, 266 թերթ, թուղթ, 17x11. միասիւն, նոտրգիր, 25 տող. բնագիրը՝ 216ա-7բ. հատուածք՝ 1-14.

Մ - 1714 թ., ձեռ. Հ՟Ր 3305. ժողովածու, Սպահան, գրիչ՝ տէր Սարգիս, Յակոբ քահանայ, ստացող՝ Սիմէոն արքեպս. 386 թերթ, թուղթ, 21,4x15,5. երկսիւն, բոլորգիր, 30-31 տող. բնագիրը՝ 344ա-345ա. հատուածք՝ 1-13.

Յ - ժամանակն անյայտ. Մայր Մաշտոց, Պոլիս, 1807, էջ 2-3. հատուածք՝ 1-11.

Ն - ժամանակն անյայտ. Հ. Գ. վ. Զարբհանալեան, Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց, դար Դ-ԺԳ., Վենետիկ, 1889, էջ 245-8. հատուածք՝ 1-12.

Շ - ժամանակն անյայտ. Հայսպատում, Ա., էջ 183-4.- Մաշտոց կաթողիկոս եւ աշակերտն Ստեփանոս. Հտ. Ա., էջ 418-23. ՃԺԳ. Օրհնութիւնաբեր ցուցակն եւ թարգմանիչք. հատուածք՝ 1-12. Համապատասխան տեղերում դրուած են Ալիշանի ծանօթութիւնները:

1. ԽՈՐԱԳԻՐ-ՍԿՍՈՒԱԾՔ

Ա.1 *Կարգաւորութիւնք ցուցմանց աւրհնութիւնաբեր ցուցակիդ, եթէ ով ոք կամ յորում ժամանակաց հայրապետացն են արարել զկարգս աւրհնութիւնաբեր ցուցակիդ, եւ եթէ ով ոք եբեր ի Հայաստան աշխարհս, եւ որոց հրամանաւ կամ կարգաւ տուեցին, երանելոյն Մովսէ-*

սի Խորենացոյ թարգմանչի, որ էր գրիչ սրբոյն Սահակայ Հայրապետին Հայոց, որդւոյ[1] սրբոյն Ներսեսի

Բ.1 *Կարգաւորութիւն աւրհնութիւնարեր ցուցակի[2], որ ունի յինքեան զժամանակ իւրաքանչիւր կարգեալ կանոնացդ[3], զոեղիան՝ թէ ո՛վ ոք կամ յորմէ գաւառէ, զհայրապետաց ժամանակն նշանակեցից՝ թէ ո՛վ եբեր ի Հայոց աշխարհս, եւ որո՛ց հրամանաւ կարգեալ, ճառեցին*

Գ.1 *Կարգաւորութիւն աւրհնութիւնարեր ցուցակի, որ ունի յինքեան զժամանակ իւրաքանչիւր կարգեալ կանոնացդ զոեղիան՝ թէ ո՛վ ոք, կամ յորմէ գաւառէ զհայրապետաց ժամանակն նշանակեցից, թէ ո՛վ եբեր ի Հայոց աշխարհս, եւ որոց հրամանաւ կարգեալ ճառեցին*

Դ.1 *Յուցումն Օրհնութեան կարգաւորութեան. Հարց. Զօրհնութիւն ի կարգաւորութեանցս այսոցիկ ո՞վ է արարեալ, եւ ո՞վ է բերեալ յազգս հայոց. Պատասխանի. Երանելովն Մովսէս Խորենացի, որ էր գրիչ Սահակայ Պարթեւի*

Ե.1 *Եւ գոհութիւն Աստուծոյ Բանին, որ ողորմեցաւ եւ յանձն առ անժամանակական՝ լինել ընդ ժամանակաւ, եւ անմահական՝ ընդ մահուամբ. եւ Որդի Աստուծոյ որ յառաջ քան զամենայն յաւիտեանս ե- զանի եւ կոչի որդի Դաւթի եւ զաւակ Աբրահամու. եւ բարեբանութիւն ամենասուրբ Հոգւոյն Աստուծոյ, որ գործակից եղեւ Որդւոյ/// եւ մաք- բազարդեալ լցոյց զառաքեալսն ի սուրբ վերնատանն, ի ձեռն հրեղէն լեզուաց, բաժանեալ ի նոսա զշնորհս, որք զաւրացան եւ եղեն աւետա- րան քարոզք սիեզերաց, ընդ որս եւ սուրբ հայրապետք եւ երջանիկ սուրբ Գրիգոր Լուսաւորիչն մեր եւ ի շառաւիղաց նորա սուրբ Իսահակ Պարթեւն եւ քաջ բաբունապետն Մեսրաւպ, երջանիկ, սուրբ եւ ընտ- րեալ աշակերտօքն թարգմանեցին զամենայն Աստուածաշունչ գրեանքն ի հայ գիրս եւ ի բարբառ:*

Զ.1 *Հարցումն. Կարգաւորութիւն ցուցման օրհնութիւնաբեր ցուցա- կին. Պատասխանի. Երանելին Մովսէս Խորենացին թարգմանիչ, որ է գրիչ սրբոյն Սահակայ՝ որդւոյ սրբոյն Ներսէսի:*

Է.1 *Կարգաւորութիւն ցուցման աւրհնութեանաբեր ցուցակիս, թէ ով ոք կամ ուստի կամ յորում ժամանակի եւ յոր ազգէ կամ ի քաղաքէ եւ ով ոք ի սրբոցն արարեալ է ի կարգաց աւրհնութեանցս այսոցիկ, եթէ*

[1] *Ա, որդոյ*
[2] *Բ, ցուցակին*
[3] *Բ, կանոնաց*

ով եբեր ի Հայս կամ ուստի հրամանաւ՝ ճառեցից, երանելոյն Մովսէսի թարգմանչի, որ էր գրիչ սրբոյն Սահակայ Հայրապետի Հայոց, որդոյ Ներսէսի

Ը.1 *Կարգաւորութիւն ցուցման աւրհնութեանաբեր ցուցակիս, թէ ով ոք կամ ուստի, կամ յորում ժամանակի եւ յոր ազգէ կամ ի քաղաքէ, եւ ով ոք ի սրբոցն արարեալ է ի կարգաց աւրհնութեանցս այսոցիկ, եթէ ով եբեր ի Հայս կամ որում հրամանաւ. ճառեցից, երանելոյն Մովսէսի թարգմանչի, որ էր գրիչ սրբոյն Սահակայ Հայրապետի Հայոց, որդոյ Ներսէսի*

Թ.1 *Սուրբ Հայրապետացն է արարեալ զկարգ աւրհնութիւնաբեր ցուցակիս. եւ թէ ո՛վ եբեր ի Հայաստան աշխարհս. կարգաւ ճառեցից, երանելոյն Մովսէսի Խորենացոյ, թարգմանչի, որ է գրիչ սրբոյն Սահակայ Հայրապետին Հայոց՝ որդւոյ սրբոյն Ներսէսի*

Ժ.1 [*Յուցակ Մաշտոցին*]

Ի.1 *Խրատք Մաշտոց գրոց. Կարգաւորութիւն ցուցման աւրհնութեանաբեր ցուցակիս, թէ ով ոք կամ յուստի, կամ յորում ժամանակի եւ յոր ազգէ կամ ի քաղաքէ, եւ ով ոք ի սրբոցն արարեալ է կարգացս աւրհնութեանցս այսոցիկ, եւ թէ ո՛վ եբեր ի Հայս, կամ ո՛ւմ հրամանաւ՝ ճառեցից, երանելոյն Մովսիսի թարգմանչի, որ էր գրիչ սրբոյն Սահակայ Հայրապետին Հայոց, որդոյ Ներսէսի*

Լ.1 *Կարգաւորութիւն ցուցման աւրհնութիւնաբեր կտակիս, եթէ ուստի կամ ով ոք եւ յորում ժամանակի եւ ով ոք ի սուրբ Հայրապե- տացն արարեալ է ի կարգաց աւրհնութիւնաբեր կտակիս, եւ եթէ ո՛ ոք եբեր ի Հայաստան աշխարհս եւ ոյր հրամանաւ. կարգաւ ճառեցից, եա- նելին Մովսէս թարգմանիչ, որ էր գրիչ սրբոյն Սահակայ՝ որդւոյ սրբոյն Ներսեսի*

Խ.1 *Թարգմորութիւն աւրհնութիւնաբեր ցուցակի, որ ունի յինքեան զժամանակ իւրաքանչիւր կարգեալ կանոնաց զոեղիան, թէ ով ոք կամ յորմէ գոաւէ զհայրապետաց ժամանակն նշանակեցից, թէ ով եբեր ի Հայոց աշխարհս եւ որոց հրամանաւ կարգեալ. ճառեցից*

Ծ.1 *Կարգաւորութիւն աւրհնութենաբեր ցուցակի, որ ունի յինքեան զժամանակ իւրաքանչիւր կարգեալ կանոնացդ, զոեղիան, թէ ով ոք կամ յորմէ գոաւէ զհայրապետաց ժամանակ նշանակեցին, թէ ով եբեր ի Հայոց յաշխարհս եւ որոց հրամանաւ կարգեալ ճառեցին*

Կ.1 *Կարգադրութիւն աւրհնութիւնաբեր ցուցակիդ, թէ յումմէ եղեւ սկիզբն աւանդութեան, զոր գրով եառուն մեզ՝ անսգալ հիմն կարգի քրիստոնէութեանս*

Հ.1 *Վասն Մաշտոցին բանն, թէ ոք չիննաց, ուստի բեվաւ. Կարգաւորութիւն ցուցմանց աւրհնութիւնաբեր ցուցակին, թէ ով ոք կամ ուստի եւ կամ որում ժամանակի հարապետացն են արարեալ, եւ կարք քահանութեանաբեր ցուցակի, եւ թէ ոյք եբեր ի Հայաստան աշխարհս եւ որոց հրամանաւ կամ կարգաւ ճառիցն երանելոյն Մովսէսի Խորենացւոյ թարգմանչի, որ էր գրիչ թարգմանի սրբոյն Սահակայ Հայրապետին Հայոց, որդւոյ սրբոյն Ներսէսի*

Ջ – *չունի*

Ղ.1 *Կարգաւորութիւն ցուցման աւրհնութիւնաբեր կտակիս. եթէ ուստի կամ ով ոք, եւ որում ժամանակի, եւ ով ոք ի սուրբ Հայրապետացն արարեալ է ի կարգաց աւրհնութիւնաբեր կտակիս, եւ եթէ ով ոք եբեր ի Հայաստան աշխարհս, եւ ոյր հրամանաւ. կարգօ ճառիցից. երանելին Մովսէս թարգմանիչ, որ էր գրիչ սրբոյն Սահակայ՝ որդւոյ սրբոյն Ներսէսի*

Ճ.1 *Կարգադրութիւն ցուցման օրհնութենաբեր ցուցակիս, թէ ո՛վ ոք եւ կամ ուստի, կամ յորում ժամանակի, եւ յոր ազգէ կամ ի քաղաքէ, եւ ով ոք ի սրբոցն արարեալ է ի կարգաց աւրհնութեանցս այսոցիկ, եթէ ով եբեր ի Հայս, կամ ում հրամանաւ, ճառեցից, երանելւոյն Մովսէսի թարգմանչի, որ էր գրիչ սրբոյն Սահակայ Հայրապետի Հայոց, որդւոյ Ներսէսի*

Մ.1 *Կարգաւորութիւն աւրհնութիւնաբեր ցուցակի, որ ունի յինքեան զժամանակ իւրաքանչիւր կարգեալ կանոնացդ զտեղիս, թէ ով ոք կամ յորմէ գաւառէ զհայապետաց ժամանակն նշանակեցից, թէ ո՛վ եբեր ի Հայաստան աշխարհս, եւ որոց հրամանաւ կարգեալ ճառեցին*

Յ.1 *Կարգաւորութիւն օրհնութիւնաբեր ցուցակի, որ ունի յինքեան զժամանակ իւրաքանչիւր կարգեալ կանոնացդ զտեղիան. թէ ո՛վ ոք կամ յորմէ՛ գաւառէ, զհայրապետաց ժամանակն նշանակեցից, թէ ո՞վ եբեր ի Հայոց աշխարհս, եւ որոց հրամանաւ կարգեալ ճառեցին*

Ն.1 *Երանելին Մովսէս Խորենացի, թարգմանիչ, որ էր գրիչ սրբոյն Սահակայ՝ որդւոյ սրբոյն Ներսեսի*

Շ.1 *Կարգաւորութիւն ցուցմանց*[1] *աւրհնութիւնաբեր ցուցակի, որ ունի յինքեան զժամանակ իւրաքանչիւր կարգեալ կանոնացդ, զտեղիսն թէ ով ոք կամ յորմէ գաւառէ, զհայրապետացն ժամանակն (եւս) նշանակեցից, թէ ով եբեր ի Հայոց աշխարհս, եւ որո՞ց հրամանաւ կարգեալ, ճառեցից*[2]*, երանելւոյն Մովսէսի թարգմանչի*[3]*, որ էր գրիչ սրբոյն Սահակայ Հայրապետի Հայոց՝ որդւոյն սրբոյն Ներսիսի*

2.

Ա.2 *Յետ ճԺԱ.*[4] *ամի սրբոյն Գրիգորի եղեւ սկիզբն թարգմանութեան ի հայերէն լեզուս, յերկրորդ ամի թագաւորութեանն Վռամշապհոյ առաքէ սուրբն Սահակ ի յԱնձիաձու քաղաքն եւ ետ բերել զՍերմնաւրհնէքդ, զկալի եւ զհնձանի, զոր արարեալ էր ի Ե.*[5] *ամի հայրապետութեան իւրոյ սրբոյն Գրիգորի Աստուածաբանի:*

Բ.2 *Յետ ճԺԱ. ամի սրբոյն Գրիգորի եղեւ թարգմանութիւն հայերէն լեզուիս. երանելին Մովսէս թարգմանիչ, որ էր գրիչ սրբոյն Սահակայ, որդւոյ սրբոյն Ներսիսի, ի Գ. ամի թարգմանութեան Մեսրովբայ առաքեաց սուրբն Սահակ ի Նազիազ՝ յաթոռ Աստուածաբանի, եւ ետ բերել զՍերմնաւրհնէքն*[6]*, զկալի եւ զհնձանի, զոր արարեալ էր Աստուածաբանի ի Ե.երորդ ամի հայրապետութեան*[7] *իւրոյ:*

Գ.2 *Յետ ճԺԱ. ամի սրբոյն Գրիգորի եղեւ թարգմանութիւն հայերէն լեզուիս. երանելին Մովսէս թարգմանիչ, որ էր գրիչ սրբոյն Սահակայ, որդւոյ սրբոյն Ներսիսի, ի Գ. ամի թարգմանութեան Մեսրովբայ առաքեաց սուրբն Սահակ ի Նազիազ՝ յաթոռ Աստուածաբանի, եւ ետ բերել զՍերմաւրհնէքն, զկալի եւ զհնձանի, զոր արարեալ էր Աստուածաբանի, ի Ե.երորդ ամի հայրապետութեանն իւրոյ:*

---

[1] *Օրինակ մի գրած է Ընթերցան, որ պէտք է ըլլայ Ընթերցմանց*

[2] *Յայտնի է, որ բոլոր կանոնները հաւաքելով կարգաւորողին է այս վերնագիրս, որ նշանակուի անմիջապէս յիշուած անուամբ:*

[3] *Ո՞վ է այս երանելի թարգմանիչն Մովսէս: – Ընտիր օրինակ մի չտկէ չիտակ գրէ Մովսէսի Խորենացւոյ. ուրիշ լաւ օր. մի՝ Մովսէս Կիւրենացին. չեմք կարծեր որ Սիմէոն Կիւրենացւոյ տեղակից ըլլայ. ի Հայս այլ չեմք ճանչենար Կիւրեն կոչուած տեղ, բայց միայն Կերեն ի Սիւնիս: Խորենացւոյ պատշաճի՝ թէ ոչ. տե՛ս զնա ի յիշատակի պատմչաց:*

[4] *Ա*$_1$ *.ճժե.*

[5] *Ա*$_1$ *հինգ*

[6] *Բ*$_1$ *զսերմաւրհնէքն*

[7] *Բ*$_1$ *Հայրապետութեանն*

Դ.2 *Յետ ճԺ. ամի սրբոյն Գրիգորի եղեւ սկիզբն թարգմանութեան ի հայոց լեզու. ի Բ. ամի թարգմանութեանն առաքեաց սուրբն Իսահակ եւ ետ բերել զՍերմնօրհնէքն գկալոյ եւ գհնձանին, զոր արարեալ էր սուրբն Գրիգոր Աստուածաբանն՝ յեօթն ամի հայրապետութեան իւրոյ:*

Ե.2 *Յետ ճ. եւ Ժ. ամի երթալուն Հռոմ սրբոյն Գրիգորի, եղեւ սկիզբն թարգմանութեան, որ առաքեաց Սուրբն Իսահակ Պարթեւ զՄովսէս Խորենացին ի քաղաքն Անձխանձոյ եւ ետ բերել անտի զՍերմնօրհնէքն եւ գկալն եւ գհնձան, եւ զՅաղդզօրհնէքն եւ զամենայն Արմտիս, զոր արարեալ էր սրբազան Գրիգոր Աստուածաբանն ի հինգերորդի ամի հայրապետութեան իւրոյ:*

Զ.2 *Յետ ճԺԱ. ամի սրբոյն Գրիգորի եղեւ սկիզբն թարգմանութեան. իսկ ի յերրորդ ամի թարգմանութենէն առաքեաց սուրբն Սահակ ի յԱնձխանձու քաղաքն եւ ետ բերել զՍերմօրհնէքն, գկալի եւ գհնձանի, զոր արարեալ էր ի Ե. ամի հայրապետութեան իւրո սրբոյն Գրիգորի Աստուածաբանի:*

Է.2 *Յետ ճԺԱ. ամի սրբոյն Գրիգորի եղեւ սկիզբն թարգմանութեան հայ լեզուի, յերկրորդ ամի թարգմանութեանն առաքեաց սուրբն Մաշտոց յԱզնազու քաղաք եւ ետ բերել զՍերմաւրհնէք գկալի եւ գհնձանի, զոր արարեալ էր Ե. ամի Գրիգորի Աստուածաբանի:*

Ը.2 *Յետ ճԺԱ. ամի սրբոյն Գրիգորի եղեւ սկիզբն թարգմանութեան հայ լեզուի. յերկրորդ ամի թարգմանութեանն առաքեաց սուրբն Սահակ յԱզիազու քաղաք եւ ետ բերել զՍերմաւրհնէքն, գկալի եւ գհնձանի, զոր արարեալ էր Ե. ամի հայրապետութեան իւրոյ Գրիգորի Աստուածաբանի:*

Թ.2 *Յետ ճԺԱ. ամի սրբոյն Գրիգորի, եղեւ սկիզբն թարգմանութեան հայերէն լեզուիս. յԲ.րդ թարգմանութենէն առաքէ սուրբն Սահակ ի յԱնձխանձու քաղաք եւ ետ բերել զՍերմաւրհնէքն, գկալին եւ գհնձանին, զոր արարեալ էր սուրբն Գրիգոր Աստուածաբանն յետ Ե. ամի հայրապետութեան իւրոյ:*

Ժ ~ չունի

Ի.2 *Յետ ճԺԱ. ամի սրբոյն Գրիգորի եղեւ սկիզբն թարգմանութեան հայ լեզւի, յերկրորդ ամի թարգմանութեան առաքեաց սուրբն Մաշտոց յԱզնազու քաղաք եւ յետ բերել զՍերմաւրհնէք, գկալի եւ գհնձանի, զոր արարեալ էր Ե. ամի Գրիգորի Աստուածաբանի:*

Լ.2 *Յետ ճ. եւ ժ. ամի սրբոյն Գրիգորի եղեւ սկիզբն թարգմանութեան, առաքէ զսուրբն Մաշտոց ի Նազիազ քաղաք եւ տա բերել զՍերմնաւրհնէքն, գկալ եւ գհնձան, զոր արարեալ է Աստուածաբանին:*

Գ.12 *Իսկ զՀիմնարկէք եւ զԵկեղեցւոյ աւրհնէք, եւ զՍրբել տաճարի, եւ ժամահարի եւ Սկի եւ մաղզմայի, եւ Հանդերձի սպասու եւ Աւազան, եւ Մկրտութիւն առնել եւ Խաչ աւրհնել, եւ Պատկ դնել, եւ Պահոց քարոզնին եւ աղաւթնին՝ զայդ Մանդակունի է արարեալ, որ Դժ. թիւ էր ի սրբոյն Գրիգորէ մինչեւ ցսա:*

Դ.12 Հմմտ.Կէ. *Իսկ վասն Հիմնարկութեան սուրբ տաճարի եւ ժամահար օրհնելոյ, Սկիհ եւ մաղզմայ, եւ զԳիրք, եւ զԿնունք առնելոյ, եւ Խաչօրհնելոյ, եւ զՔառասնորդաց Գ. ժամուց զքարոզքն եւ զաղօթսն՝ Յոհան Մանդակունին է արարեալ, որ ԺԴ. թիւ էր ի սրբոյն Գրիգորէ. եւ այս գիտելի է, զի առաջին աղօթք յամենայն կարգադրութիւնս՝ Գոհանամք պարտ է դնել, բայց առաւել՝ ի կնքելն եւ ի թաղել մեռելոյն, զի Դիոնէսիոս այր առաքելական ասէ, թէ. Ասեն եպիսկոպոսին, թէ ոք եկեալ է կնունք խնդրել, նա զձեռն ի վեր առեալ գոհանայ զԱստուծոյ. նմանապէս թէ պատմի վասն վախճանի ուրուք:*

Ե.12 *Իսկ վասն Հիմնարկութեան սրբոյ տաճարին եւ զժամահար օրհնելն, եւ Սկի եւ մաղզմայ, եւ զՆորակերտ գիրքն, եւ զկնունքն, եւ զՊատկ դնելն եւ զՊատկ վերացուցանելն, եւ զԽաչօրհնէքն, եւ զԽաչալացն եւ զՊղծակեր բերանոյն, եւ զՊղծեալ կերակրոյն, եւ զերդմնահարացն, եւ զերաշտութեանն եւ այլ շատ ուղո[ւթիւնս]/// (ասէ վերջ պատառ-աճ էջիշպոկոսանը):*

Զ.12 *Իսկ վասն Հիմնարկութեան սուրբ եկեղեցոյ եւ ժամ օրհնելոյ, Սկի եւ մաղզմա եւ զԳիրք, եւ Կնիք աչնելոյ, եւ Խաչ օրհնելոյ, եւ Պատկ օրհնելոյ, եւ զՔառասնորդաց քարոզսն եւ զաղօթսն՝ Յոհաննու է արարեալ Մանդակունոյ, որ չորեքտասան թիւ էր ի սրբոյն Գրիգորէ:*

Է.13 *Իսկ Հիմնարկէքն եւ Եկեղեցի աւրհնել, Սկի եւ մաղզմա, եւ Պղծել տաճարի, Կնունք եւ Խաչ եւ ժամահար, Պատկ եւ զՔառասնորդսացն Գ. ժամուցն քարոզնն եւ զաղօթս՝ զայս կարգեալ է Յոհաննն Մանդակունոյ ի փառս Աստուծոյ:*

Ը.12 *Իսկ Հիմնարկէքն եւ Եկեղեցի աւրհնել, Սկի եւ մաղզման, եւ Պղծել տաճարի, Կնունք եւ Խաչ, եւ ժամահար, Պատկ եւ զՔառասնորդացն Գ. ժամուցն քարոզսն, եւ զաղաւթսն՝ զայս կարգեալ է Յոհան Մանդակունոյ ի փառս Աստուծոյ:*

Թ.13 *Իսկ վասն Հիմնարկութեան եւ Եկեղեցի աւրհնելոյ, եւ Սրբելոյ տաճարի, եւ ժամահար աւրհնելոյ, եւ ըՍկի եւ մաղզմայ, եւ Գիրք նոր, եւ Կնունք եւ Պատկ եւ Խաչ աւրհնել, եւ զԽ.որդացն Գ. ժամուն քարոզն եւ աղօթքն Յոհաննու Մանդակունոյ է արարեալ, որ չորեքտասան թիւ էր ի սրբոյն Գրիգորէ:*

Ժ.12 *Իսկ զՀիմնարկութիւն սրբոյ տաճարին եւ ժամահարի, եւ Սրբելոյ եւ մաղզմանի, եւ Գրոց, եւ Կնքոյ, եւ Խաչօրհնելոյ եւ Պատկ դնելոյ, եւ զԽ.որդացն Գ. ժամուն զքարոզն եւ զաղօթսն Յովհան Մանդակունի է արարեալ, որ ԺԴ. թիւ էր ի սրբոյն Գրիգորէ:*

Ի.13 *Իսկ Հիմնարկէքն եւ Եկեղեցի աւրհնել, Սկի եւ մաղզմայ, եւ Պղծել տաճարի, Կնունք եւ Խաչ եւ ժամահար, Պատկ եւ զՔառասնորդացն Գ. ժամուց քարոզնն եւ զաղօթսն՝ զայս կարգեալ է Յոհաննն Մանդակունուոյ ի փառս Աստուծոյ:*

Լ.12 *Իսկ զՀիմնարկէքն եւ զԵկեղեցւոյ աւրհնէքն եւ Սրբեալ տաճար եւ ժամահար, Սկի եւ մաղզմայ, եւ Խաչ աւրհնել եւ Գիրք աւրհնել, Կնունք եւ Պատկ, եւ զՔառասնորդաց զերեք ժամու զքարոզսն եւ զաւաթսն Յովհաննու Մանդակունոյ է արարեալ, որ ԺԳ. թիւ էր ի սրբոյն Գրիգորէ:*

Խ.12 *Իսկ զՀիմնարկեք եւ զԵկեղեցւոյ աւրհնէք, եւ զՍրբել տաճարի եւ ժամահարի, եւ Սկի եւ մաղզմայի, եւ Հանդերձի սպասու եւ Աւազան, եւ Մկրտութիւն առնել եւ Խաչ աւրհնել, եւ Պատկ դնել եւ Պահոց քարոզնին եւ աղօթնին՝ զայդ Մանդակունի է արարեալ, որ Դժ. թիւ էր ի սրբոյն Գրիգորէ մինչեւ ցսա:*

Ծ.12 *Իսկ զՀիմնարկէքն եւ զԵկեղեցւոյ աւրհնէքն, եւ զՍրբել տաճարին եւ զժամահարի, եւ զՍկիհ եւ զմաղզմայի, եւ Հանդերձի սպասու եւ Աւազան, եւ Մկրտութիւն եւ Խաչ աւրհնել, եւ Պատկ դնել, եւ Պահոց քարոզնին եւ աղօթքնին՝ զայդ Մանդակունի է արարեալ, որ Դժ. թիւ էր ի սրբոյն Գրիգորէ մինչեւ ցսա:*

[1] *Բ1 զեկեղեցոյ*
[2] *Բ1 > եւ հանդերձի*
[3] *Բ1 .ժդ.*
[4] *Բ1 ցսայ*

Կ.13 *Իսկ վասն Հիմնարկութեան Եկեղեցոյ եւ Օրհնութեան նորին, եւ Սրբել տաճարի եւ ժամահար, եւ Գիրգ օրհնել եւ կնունք առնել եւ Պսակ հարսանեաց օրհնել, եւ զՔառասնորդաց յերեկութեան աղօթիանին եւ զքարոզս՝ արարեալ է Յոհաննու Մանդակունոյ, որ տասներրորդ չորրորդ թիւ էր ի սրբոյն Գրիգորէ:*

Հ.11 *Իսկ վասն Հիմնարկութիւնս սրբոյ տաճարին եւ ժամայհար աւրհնելոյ, Սկի եւ մաղմայ, եւ Գիրք եւ կնունք եւ Խաչ աւրհնէքն, եւ Պսակ եւ զՔառասնորդեացն Գ. ժամէ՝ Մանդակունի է արարեալ, որ չորեքտասան թիւ էր սրբոյն Գրիգորի:*

Ջ.7 *Իսկ Հիմնարկէք եւ զՊդծեալ տաճարին, ժամահար եւ Սկի եւ մաղմա, զՆոր գիրքն, եւ Խաչ եւ Պսակ հարսին եւ զՊահոց քարոզնին եւ զաղօթնին՝ Յոհան Մանդակունեցին.*

Ղ.12 *Իսկ զՀիմնարկէան եւ զեկեղեցւոյ աւրհնէան եւ Սրբեալ տաճար եւ ժամահար, եւ Սկի եւ մաղմայ, եւ Խաչ աւրհնել, եւ Գիրք աւրհնել, կնունք եւ Պսակ, եւ զՔառասնորդաց գերեք ժամու զքարոզն եւ զաղաւթն՝ Յովաննու Մանդակունոյ է արարեալ, որ ԺԳ. թիւ էր ի սրբոյն Գրիգորէ:*

Ճ.13 *Իսկ Հիմնարկէքն եւ Եկեղեցոյ աւրհնել, Սկի եւ մաղմա, եւ Պղծեալ տաճարի, կնունք եւ Խաչ, եւ ժամահար, Պսակ եւ զՔառասնորդացն Գ. ժամուցն քարոզն, եւ զաղօթն՝ զայս կարգեալ է Յուհան Մանդակունւոյ ի փառս Աստուծոյ:*

Մ.12 *Իսկ զՀիմնարկէքն եւ Եկեղեցի աւրհնէքն եւ զՍրբել տաճարի, եւ ժամահար, եւ Սկի եւ մաղմանի, եւ Հանդերձի սպասու, եւ Աւազան աւրհնել, եւ Մկրտութիւն առնել, եւ Խաչ աւրհնել, եւ Պսակ դնել, եւ Աղուհացից քարոզ[ն]ին եւ աղօթնին՝ զայդ Յոհան Մանդակունին է արարեալ, որ ԺԴ. թիւ էր ի սրբոյն Գրիգորի մինչեւ ցսա:*

Յ.11 *ԶՀիմնարկէք եւ զեկեղեցւոյ օրհնէքն, զՍրբել տաճարի եւ ժամահարի, Սկիհ եւ մաղմայի, եւ Հանդերձի սպասու, Աւազան եւ Մկրտութիւն առնել, Խաչ օրհնելոյ եւ Պսակ դնել, եւ քարոզանին եւ աղօթանին՝ զայդ Մանդակունին է արարեալ, որ չորեքտասան թիւ էր ի սրբոյն Գրիգորէ մինչեւ ցսա:*

Ն.11 *Իսկ զՀիմնարկէքն եւ Եկեղեցւոյ աւրհնէքն, եւ զՍրբել տաճարի եւ ժամահարի, եւ Սկի եւ մաղմայի եւ Հանդերձի սպասու եւ Աւազան եւ Մկրտութիւն առնել եւ Խաչ օրհնել, եւ Պսակ դնել եւ զՔառասնորդաց քարոզն՝ զայդ Յոհաննու է արարեալ Մանդակունւոյ, որ չորեքտասան թիւ էր ի սրբոյն Գրիգորէ:*

Շ.11 *Իսկ զՀիմնարկէքն եւ զեկեղեցւոյ օրհնէքն եւ զՍրբել տաճարի, եւ զժամահար օրհնելոյ, եւ Սկիհի եւ մաղմայի, եւ Գիրք, եւ Հանդերձի սպասու, եւ Աւազան, եւ Մկրտութիւն առնել, եւ Խաչ օրհնել, եւ Պսակ օրհնելոյ, եւ զՔառասնորդաց քարոզն եւ զաղօթն՝ զայդ (ամենայն) Յովհաննու է արարեալ Մանդակունւոյ, որ չորեքտասան թիւ էր ի սրբոյն Գրիգորէ[1]:*

13. ԱԻԱՐՏ-ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Ա.13 *Այսքան է, եղբայր գիտնական, յորժամ կամիցիս քերել ցուցակ զՄաշտոցին զքերեալսդ նախ գծեացես[2]:*

Բ - չունի

Գ - չունի

Դ.13՝ յ–է–՝ *Իսկ աղօթքն զոր Յովհաննէս ուսոյց աշակերտաց իւրոց այս էր. Հա՛յր սուրբ, ուսո՛ մեզ զքան քո, Որդի՛ սուրբ, ցո՛յց մեզ զերեսս քո, Հոգի՛ Սուրբ, սրբութեամբ քո սրբեա՛ զմեզ: Եւ եփրեմի ներբողեանն այլ ցոյց զայս տայ, թէ զահիճն եաես ի բանտին՝ որ այսպէս աղօթէր: Այլ ոմանք ասեն. «Օրհնել Տէ՛ր, որ զբնակեալդ ես ի բարձունս» այն է:*

Դ.14 *Այսքան մինչեւ ցայս վայր՝ վասն այժմոյս, եւ կարգաց եկեղեցւոյ. իններորդ հարցմանս բաւական լիցի ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ. ամէն:*

Ե - չունի

Զ.13 *Այսքան է, եղբայր գիտնական, [յորժամ կամիցիս գիտել զցուցակ Մաշտոցին]*[3]*:*

---

[1] *Յետ Ս. Սահակայ եւ Մեսրովպայ՝ անտարակոյս այս Մանդակունի հայրապետս է եբրախտաւորն մեր եկեղեցական կարգաց, կանոնաց եւ աղօթից: Հեղինակ Յուցակիս զնա ԺԴ՝ հաշուէ ի Ս. Գրիգորէ սկսեալ, ինչպէս զՍ. Սահակ այլ ըստ այնմ ԺՀ՝ որով կ'երեւի թէ դուրս թողուած են Ս. Յուսկան եւ Ներսէսի միջոցի երկուքն, բայց ընդունուած են Ներսիսի եւ Սահակայ միջում գրուած չորք օտարացեղ կաթողիկոսունք. իսկ ի Ս. Սահակայ (որ 10՝ գրուի) մինչ ի Մանդակունի՝ որ 16՝ կ'ըսուի, իննքահանայապետք կամ աթոռակալք այլ կան. յորս հաշուելով եւ զՍ. Մեսրովպ եւ զՅովսէփ եւ զԳիւտ, եւ այս երեքն միայն օրինաւոր համարելով՝ Մանդակունին կ'ըլլայ ճիշդ 16՝, արժանապէս դուրս թողլով Ս. Մեսրովպայ եւ Ս. Յովսէփայ միջանկեալքն՝ Բրքիչոյ, Շմուէլ, Սուրմակ. իսկ ընդ Յովսէփայ եւ Մանդակունւոյ յիշանկեալքն՝ Մելիտէ, Մովսէս, Քրիստափոր, ո՞ւր մնան: Բայց զայս ըսելով չեմք ուզեր հօս լուծել այս կաթողիկոսաց չարքի խնդիրը. զորս՝ զամենն՝ որ եւ է կերպով քահանայապետացեալս չարագասելով, չարն ու բարին, Մանդակունին կ'ըլլայ 24՝:*

[2] *Ա գծեացես + եւ քրիստոսի աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն*

[3] փակագծեալը ջնջած է

Է.14 *Շարադրութիւն կարգաւորութեան սուրբ ցուցակիս, զոր մակադրեալ սուրբ հաւրն Մաշտոցի, ի պայծառութիւն սրբոյ եկեղեցւոյ եւ ի պարծանս մանկանց նորին, եւ հաւատացելոց սուրբ Երրորդութեանն, ի դաստիարակութիւն նոցա եւ յուսումն եւ ի հաստատութիւն հաւատոյ, որպէս զի հասցեն ի չափ հասակի եւ կատարմանն Քրիստոսի ընդ սուրբս ամենայն. այս ամենայն ի հրամանէ սրբոյն Սահակայ Պարթեւի, ձեռամբ Մովսէսի գրչի նորոգեցաւ ի Հայք ի փառս Աստուծոյ:*

Ը.13 *Շարադրութիւն կարգաւորութեան սուրբ ցուցակիս, զոր մակադրեալ սուրբ հաւրն Մաշտոցի, ի պայծառութիւն սրբոյ եկեղեցոյ եւ ի պարծանս մանկանց նորին, ի դաստիարակութիւն նոցա եւ յուսումն, եւ ի հաստատութիւն հաւատացելոց սուրբ Երրորդութեանն. այս ամենայն ի հրամանէ սրբոյն Սահակա Պարթեւի, ձեռամբ Մովսէսի գրչի նորոգեցաւ ի Հայք, ի փառս Աստուծոյ:*

Թ.15 *Այսոքիկ ստոյգ են եւ ճշմարիտ, ո՛վ սուրբ ընթերցող. փառք Աստուծոյ:*

Ժ.13 *Այսքան է ցուցակ Մաշտոցին:*

Ի.14 *Յարադրութիւն կարգաւորութեան սուրբ ցուցակիս, զոր մակադրեալ սուրբ հօրն Մաշտոցի, ի պայծառութիւն սրբոյ եկեղեցւոյ եւ ի պարծանս մանկանց նորին, եւ հաւատացելոց սուրբ Երրորդութեան, ի դաստիարակութիւն նոցա եւ յուսումն եւ ի հաստատութիւն հաւատոյ, որպէս զի հասցեն ի չափ հասակի կատարմանն Քրիստոսի սուրբս ամենայն. այս ամենայն ի հրամանէ սրբոյն Սահակայ Պարթեւի, ձեռամբ Մովսէսի գրչի նորոգեցաւ ի Հայք, ի փառս Աստուծոյ:*

Լ.14 *Այսոքիկ ստոյգ են եւ ճշմարիտ:*

Խ- չունի

Ծ - չունի

Կ - չունի

Հ.12 *Այքան, եղբա՛ր գիտնական, յերժամ կամիցիս գիտել զցուցակ Մաշտոցին:*

Ջ - չունի

Ղ.14 *Այսոքիկ ստոյգ են եւ ճշմարիտ:*

Ճ.14 *Շարադրութիւն կարգաւորութեան սուրբ ցուցակիս, զոր մակադրեալ սուրբ հաւրն Մաշթոցի, ի պայծառութիւն սրբոյ եկեղեցւոյ եւ ի պարծանս մանկանց նորին, ի դաստիարակութիւն եւ յուսումն, եւ ի հաստատութիւն հաւատացելոց սուրբ Երրորդութեանն. այս ամենայն*

ի հրամանէ սրբոյն Սահակայ Պարթեւի, ձեռամբ Մովսէսի գրչի նորոգեցաւ ի Հայք, ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ. ամէն:

Մ - չունի

Յ - չունի

Ն.12 *Այս ամենայն ի հրամանէ սրբոյն Իսահակայ Պարթեւի, ձեռամբ Մովսիսի գրչի նորոգեցաւ ի Հայք»:*

Շ.12 *Այսքան է, եղբա՛յր*[1]*:*

ԿԱՐԳԱԻՈՐՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՑԱՆԿՆ ԸՍՏ ՄԵՐ ԲՆԱԳՐԻ ԿԱՐԳԻ

Ա. *ՀԻՄՆԱՐԿԻՔ. Յովհաննու Մանդակունոյն է արարեալ, որ չորեքտասան թիւ էր ի սրբոյն Գրիգորէ - Ա.12, Բ.11, Գ.12, Դ.12, Ե.12, Զ.12, Է.13, Ը.12, Թ.13, Ժ.12, Ի.13, Լ.12, Խ.12, Ծ.12, Կ.13, Հ.11, Ջ.7, Ղ.12, Ճ.13, Մ.12, Յ.11, Ն.11, Շ.11:*

Բ. *ԵԿԵՂԵՑԻՈՑ ԱԻՐՀՆԷՔ. Յովհաննու Մանդակունոյն է արարեալ, որ չորեքտասան թիւ էր ի սրբոյն Գրիգորէ - Բ.11, Գ.12, Զ.12 (Ժամ), Է.13, Ը.12, Թ.13, Ի.13, Լ.12, Խ.12, Ծ.12, Կ.13, Ղ.12, Ճ.13, Մ.12, Յ.11, Ն.11, Շ.11:*

Բ. *ԵԿԵՂԵՑԻ ՕՐՀՆԵԼ (ԱՔՀ՝ յետոյ, ԷԲԻՃ՝ զնորն). յիշատակ է մեզ ի սրբոյն Գրիգորէ մերոյ Լուսաւորչէն - Ա.9, Ե.9, Է.10, Ը.9, Թ.10, Ի.10, Հ.9, Ճ.10:*

Գ. *ԴՈՒՌՆ ԵԿԵՂԵՑԻՈՑ ԴՆԵԼ (յետոյ՞). յիշատակ է մեզ ի սրբոյն Գրիգորէ մերոյ Լուսաւորչէն - Ա.9, Բ.9, Գ.9, Ե.9, Զ.9, Է.9, Ը.9, Թ.10, Ժ.9, Ի.10, Լ.10, Խ.9, Ծ.9, Կ.10, Հ.9, Ջ.5, Ղ.10, Ճ.10, Մ.9, Յ.9, Ն.8, Շ.8:*

Դ. *ԱԻԱԶԱՆ ԱՐՀՆԵԼ. Յովհաննու Մանդակունոյն է արարեալ, որ չորեքտասան թիւ էր ի սրբոյն Գրիգորէ - Բ.11, Գ.12, Խ.12, Ծ.12, Մ.12, Յ.11, Ն.11, Շ.11:*

---

[1] *Այս մնաս բարովէն եւս ալ աւելցնէ հին Օ. մի. «Յորժամ կամիցիս քերել զՑուցակ Մաշտոցին, զքերեալսն նախ գծեացես, եւ զմեղապարտս բիւր քանքարի՝ միով բանիւ յիշեացես»: Ինչո՞վ տարբերի քերելն ի գծելոյ կամ գրելոյ: - Ուրիշ Օ. աւելի երկար վերջաբանէ. [օրնկ.՝ Է.14] «Շարադրութիւն կարգաւորութեան սուրբ ցուցակիս, զոր մակադրեալ սուրբ հօրն Մաշթոցի, ի պայծառութիւն սրբոյ եկեղեցւոյ եւ ի պարծանս մանկանց նորին Ե- Հաւատացելոց սուրբ Երրորդութեանն, ի դաստիարակութիւն նոցա եւ յուսումն՝ կատարման Քրիստոսի ընդ սուրբս ամենայն. այս ամենայն ի հրամանէ սրբոյն Իսահակայ Պարթեւի, ձեռամբ Մովսէսի գրչի նորոգեցաւ ի Հայք, ի փառս Աստուծոյ»: Նորգինէն հաստատէ, թէ առաջուց այլ Հայք ունէին այսպիսի կանոններ:*

Դ. *ԱԻԱԶԱՆ (նոր). յիշատակ է մեզ ի սրբոյն Գրիգորէ մեր Լուսաւորչէն - Ե.9:*

Ե. *ՍՐԲԵԼ (ՊՂՇԵԱԼ) ՏԱՃԱՐԻ. Յովհաննու Մանդակունոյն է արաբեալ, որ չորեքտասան թիւ էր ի սրբոյն Գրիգորէ - Բ.11, Գ.12, Է.13, Ը.12, Թ.13, Ի.13, Լ.12, Խ.12, Ծ.12, Կ.13, Զ.7, Ղ.12, Ճ.13, Մ.12, Յ.11, Ն.11, Շ.11:*

Ե. *ՊՂՇԵԱԼ ՏԱՃԱՐԻՆ. յիշատակ է մեզ ի սրբոյն Գրիգորէ մեր Լուսաւորչէն - Ե.9:*

Զ. *ՆԿԱՐԵԱԼ (ԷԸԻՃ հին) ԵԿԵՂԵՑԻՈՑ. յիշատակ սրբոյն Գրիգորի է մեզ - Ա.9, Բ.9, Գ.9, Դ.9, Ե.9, Զ.9, Է.10, Ը.9, Թ.10, Ժ.9, Ի.10, Լ.10, Խ.9, Ծ.9, Կ.10, Հ.9, Ջ.5, Ղ.10, Ճ.10, Մ.9, Յ.9, Ն.8, Շ.8:*

Է. *ՀԱՆԴԵՐՁԻ ՍՊԱՍՈՒ. Յովհաննու Մանդակունոյն է արարեալ, որ չորեքտասան թիւ էր ի սրբոյն Գրիգորէ - Բ.11, Գ.12, Դ.12, Խ.12, Ծ.12, Մ.12, Յ.11, Ն.11, Շ.11:*

Ը. *ՍԿԻ ԵՒ ՄԱՂՁՄԱՅԻ. Յովհաննու Մանդակունոյն է արարեալ, որ չորեքտասան թիւ էր ի սրբոյն Գրիգորէ - Ա.12, Բ.11, Գ.12, Ե.12, Զ.12, Է.13, Ը.12, Թ.13, Ժ.12, Ի.13, Լ.12, Խ.12, Ծ.12, Հ.11, Ջ.7, Ղ.12, Ճ.13, Մ.12, Յ.11, Ն.11, Շ.11:*

Ը. *ՍԿԻ. ի սրբոյն Գրիգորէ մերոյ Լուսաւորչէն - Թ.10:*

Թ. *ԳԻՐՔ (նորակերտ) ԱԻՐՀՆԵԼ. Յովհաննու Մանդակունոյ - Ա.12, Դ.12, Ե.12, Զ.12, Թ.13, Ժ.12, Լ.12, Կ.13, Հ.11, Ջ.7, Ղ.12, Շ.11:*

Ժ. *ԺԱՄԱՀԱՐ ՕՐՀՆԵԼ. Յովհաննու Մանդակոյնոյն է արարեալ, որ չորեքտասան թիւ էր ի սրբոյն Գրիգորէ - Ա.12, Բ.11, Գ.12, Դ.12, Ե.12, Է.13, Ը.12, Թ.13, Ժ.12, Ի.13, Լ.12, Խ.12, Ծ.12, Կ.13, Հ.11, Ջ.7, Ղ.12, Ճ.13, Մ.12, Յ.11, Ն.11, Շ.11:*

ԺԱ. *ԽԱՉ ԱԻՐՀՆԵԼ. Յովհաննու Մանդակոյնոյն է արարեալ, որ չորեքտասան թիւ էր ի սրբոյն Գրիգորէ - Ա.12, Բ.11, Գ.12, Դ.12, Ե.12, Զ.12, Է.13, Ը.12, Թ.13, Ժ.12, Ի.13, Լ.12, Խ.12, Ծ.12, Հ.11, Ջ.7, Ղ.12, Ճ.13, Մ.12, Յ.11, Ն.11, Շ.11:*

ԺԲ. *ՏԵԱՌՆԱԿԱՆԻ (Ե՝ Դաւանականի). սրբոյն Յոստոսի (Թ՝ Յուստիանէ) է արարեալ, որ չորրորդ եպիսկոպոս էր Երուսաղէմի՝ յառաքելոյն Յակոբայ - Ա.7, Բ.7 (կրկն.՝ Բ.12), Գ-Զ.7, Ը.7, Թ.8, Ժ.7, Լ.13, Խ.13, Ծ.13, Կ.14, Հ.7, Ջ.8, Ղ.13, Ճ.8, Մ.13, Յ.7, Ն.6, Շ.6:*

ԺԲ. *ՏԵԱՌՆԱԿԱՆՆ. Յոստոս եպիսկոպոս է արարեալ, որ Դ.րդ էր յառաքելոցն - Լ.13, Ա.17, Ջ.15՝ (Սեղանոյ տեառնականի), Ը.12 եւ, Ծ.14*

ունեն Տեառնականի, եւ որպէս առաւձին՝ Սեղանոյ Տեառնականի, Թ.14, Ժ.14, Ի.14, Խ.6, Ծ.14, Հ.15:

ԺԳ. *ԱՂԱՒԻՐՀՆԷՔ. Յոստոս (Թ՝ Յուստիանէ) երուսաղէմի եպիսկոպոսն՝ ի Գ. ամին սրբոյն Սահակայ մինչ ԳԺ. ամ նորին կատարեցին ի փառս Աստուծոյ - Ա.7, Բ.7,Բ.12 (կրկն.), Գ.7, Գ.13 (կրկն.), Դ.7, Ե.7, Է.8, Ը.7, Թ.8, Ժ.7, Ի.8, Լ.8, Խ.7, Խ.13 (կրկն.), Ծ.7, Ծ.13 (կրկն.), Կ.8, Կ.14 (կրկն.), Հ.7, Ջ.8, Ղ.8, Ճ.8, Մ.7, Մ.13 (կրկն.), Յ.7, Ն.6, Շ.6:*

ԺԴ. *ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ (Ագաբան. ՄԾ որ է Մատաղն). տեառն Եփրեմի Խորին Ասորոյ ի Նիկոմիդէս (Ղ՝ յԵգեսիայ) քաղաքի արարեալ, յետ Բ. ամի (Հ՝ ԳճԲ.) հայրապետութեան իւրոյ. եւ Ղազար (ըստ՝ ԱԴԵՋԹԺՀՆՇ. ԲԳԽԾՄՅ՝ Ղազրիկ. ԷԸԻԽԿՂՃ՝ Ղազարիկ, Լ՝ Ղազարիկ փարպեցի) թարգմանիչ եղեր ի Հայս ի ԳԺ. (ԷԸԻ՝ ԺԱ., Լ՝ ԺԴ., Հ՝ ԳճԲ.) ամի թարգմանութեան սրբոյն Սահակայ Պարթեւի (ԻՃ՝ ԺԱ., Լ՝ ԺԴ., Կ՝ Բ. ամի հայրապետութեան Սահակայ), որ Թ.երորդ (ԱԴԵՋԹԺԼԿՀՂՃ՝ Ժ.) Թիւ էր ի սրբոյն Գրիգորէ, որ էր յետ ճԺԱ. (ԲԳԽԾՄ՝ Ժ., ԼՂ՝ ճԻ., Կ՝ ճԼ.) ամի անցանելոյ [ի սրբոյն Գրիգորէ] - Ա-ՋԸԺԽԾՀՄՅՆ.6, ԷԹԻԼԿՂՃ.7, Շ.5 (Ջ չունի):*

ԺԵ. *ՍԵՂԱՆՈՅ ՏԵԱՌՆԱԿԱՆԻ աւրհնել. սրբոյն Յոստոսի (Թ՝ Յուստիանէ) է արարեալ - Թ.14, Լ.13, Ղ.13:*

ԺԶ. *ՀԱՏԻ ՊԱՏԱՐԱԳԻ աւրհնել. սրբոյն Յոստոսի (Թ՝ Յուստիանէ) է արարեալ - Թ.14, Լ.13, Ղ.13:*

ԺԶ. *ՀԱՏԻ ՊԱՏԱՐԱԳԻՆ. յիշատակ է մեզ ի սրբոյն Գրիգորէ մեր Լուսաւորչէն - Ե.9:*

ԺԷ. *ՀԱՏԻ ՄԱՐՏԻՐՈՍԻ աւրհնել. սրբոյն Յոստոսի (Թ՝ Յուստիանէ) է արարեալ - Թ.14, Լ.13, Ղ.13:*

ԺԸ. *ՄԿՐՏՈՒԹԻՒՆ (կնունք) առնել. Յովհաննու Մանդակոյնոյն է արարեալ, որ չորեքտասան Թիւ էր ի սրբոյն Գրիգորէ - Ա.12, Բ.11, Գ.12, Դ.12, Ե.12, Զ.12, Է.13, Ը.12, Թ.13, Ժ.12, Ի.13, Լ.12, Խ.12, Ծ.12, Կ.13, Ղ.12, Ճ.13, Մ.12, Յ.11, Ն.11, Շ.11:*

Ի. *ՊՍԱԿ ՕՐՀՆԵԼ (դնել). [Յովհան] Մանդակունի է արարեալ, որ ԴԺ.րդ ի սրբոյն Գրիգորէ - Ա.12, Բ.11, Գ.12, Ե.12, Զ.12, Է.13, Ը.12, Թ.13, Ժ.12, Ի.13, Լ.12, Խ.12, Ծ.12, Կ.13, Հ.11, Ջ.7, Ղ.12, Ճ.13, Մ.12, Յ.11, Ն.11, Շ.11:*

Իա. *ՊՍԱԿ ՎԵՐԱՅՈՒՅԱՆԵԼՆ. [Յովհան Մանդակունի է արարեալ] - Ե.12:*

ԻԲ. *ԱՇԽԱՐՀԱԹԱՂՆ. (արար սուրբն Սահակ) ի վաղարշապատ քաղաքի (Քաղաքուգաշախ), ի վկայարանի սրբոյն Հռիփսիմէի, յետ ճժԱ. ամի սրբոյն Գրիգորի - Ա.10, Բ.10, Գ.10, Դ.10, Ե.10, Զ.10, Է.11, Ը.10, Թ.11, Ժ.10, Ի.11, Լ.11, Խ.10, Ծ.10, Կ.11, Հ.10, Ղ.11, Ճ.11, Մ.10, Յ.10, Ն.9, Շ.9 (ԱԲԳԴԵԶԹԺԼԽԾԿՀՂՄՅՆՇ մինչեւ ցայն հնովն վարէին) (Ժ չփոթ - «զՔահանայաթադպ [=զԱշխարհաթադպ]»):*

ԻԵ. *ՍՔԵՄԱՒՐՀՆԷՔՒՆ (Սքեմաւրկէքն. Շ՝ Հոքական). գ. կարգ է. ա. Թէոդորոս եպիսկոպոս Պամփիլեայ քաղաքի՝ հրամանաւ սրբոյն Անդոնի արարեալ. բ. Թեքայեցւոց սուրբ հաւրն Ամոնի, գ. Սկիւթացւոց սուրբ լերինն - Ա.8, Բ.8, Գ.8, Դ.8, Ե.8(միայն ա. կէսը), Զ.8 (միայն ա. կէսը), Է.9, Ը.8, Թ.9, Ժ.8, Ի.9, Լ.9(միայն ա., բ. կէսերը), Խ.8, Ծ.8, Կ.9, Հ.8, Ղ.9 (միայն ա., բ. կէսերը), Ճ.9, Մ.8, Յ.8, Ն.7, Շ.7 (միայն ա. կէսը). (Զ չունի):*

ԻԶ. *ՀԱՅՐԱՒՐՀՆԷՔՒՆ. (արարեալ ի Բարսղէ Կեսարացւոյ), ի հոսանս Յորդանանու յԵրուսաղէմ, զի անդ հանդիպեցաւ, եւ Խոսրով թարգմանիչն (Էի՝ թագաւորն, ԼՂ՝ միայն՝ «Խոսրով») երեր ի Հայս, հրամանաւ սրբոյն Սահակայ - Էթիվկղճ.4, Ը.3 (Զրօրհնէքի հատուածում):*

ԻԹ. *ՋՈՒՐ ԱՒՐՀՆՆԵԼՈՅՆ (Զրաւրհնէիցն). Բարսեղ Կեսարացին արարեալ է իր հայրապետութեան Է.րդ (Մ՝ Ե.երորդ) ամին, Կեսարիայում (ԱԴԶԺ՝ «յԵրուսաղէմ, զի անդ հանդիպեցաւ», ԷթիԽԾԿՂճՅՆ՝ Երուսաղէմում հանդիպեց). Խոսրով թարգմանիչը (ԷիԼԿՂճ՝ անունը չունեն) Երուսաղէմում հանդիպեց եւ Ս. Սահակի հրամանով գրեց ու բերեց ի Հայս (ԿՂճ՝ Երուսաղէմից բերուած լինելը եւ Ս. Սահակի հրամանը չունեն, Ջ՝ ունի միայն կանոնի հեղինակի անունը) - բոլոր օրինակների՝ Ա-Շ.3:*

ԼԱ. *ԱՊԱՇԽԱՐՈՂ ԿԱՐԳԵԼ (առնել). երանելի կիւրեղ Երուսաղէմացին գրել է իր հայրապետութեան ԻԱ. (ԱԵԶԹԺԿՀ՝ Ա., Էի՝ Է., ԸՃ՝ ԻԷ., ՀՂ՝ Զ.) ամին, «ի դուռն սրբոյն Սիոնի, յաւուր յորում ընծայեցուցաք նէր զԵղովմայեցիսն Աստուծոյ», Երուսաղէմից Արճան (այսպէս ունեն՝ ԹԼԿՂ. ԲԳԼԽԾՃՄ՝ Ընճակ, ԱԴԶԺՆ՝ Արջեւան, ԵՀՇ՝ Արզեւան, Էի՝ Օնու) թարգմանիչք բերին ի Հայս (Ջ՝ ունի միայն հեղինակի անունը) - Ա-Զ,ԸԺԽԾՀԶՄ-Շ.4, ԷթիԼԿՂճ.5:*

ԼԲ. *ԱՊԱՇԽԱՐՈՂ ԱՐՋԱԿԵԼ. կիւրղի Երուսաղէմացւոյ պրեալ (մնացեալը՝ տե՛ս Ապաշխարող կարգել) - Ա-Զ,ԸԺԽԾՀԶՄ-Շ.4, ԷթիԼԿՂճ.5:*

ԼԵ. ԽՈՒՆԳ. յիշատակ է մեզ ի սրբոյն Գրիգորէ մերոյ Լուսաւորչէն - Ե.9:

ԼԶ. ՍԵՐՄՆԱՒՐՀՆԷՔ, կալի եւ հնձանի. իր հայրապետութեան Ե. (ԺԾ՝ Է., Կ՝ Ժ., ԼՋՂ՝ տարին չունեն) ամին «արարեալ էր» սուրբ Գրիգորի Աստուածաբանը. (միակ չեղումը՝ Ե-ի յաւելում. «զՆաղողօրհնէքն եւ զամենայն Արմատս», Ժ այս մասն ընկած է). - բոլոր օրինակների՝ Ա-Շ.2:

ԼԶ. ԱՐՄՏԻՔԻ. արարեալ էր սրբազան Գրիգոր Աստուածաբանն ի հինգերորդի ամի հայրապետութեան իւրոյ, Անձիանձոյ երեր Մովսէս Խորենացին - Ե.2 (Ե-ի վերագրում)

ԼԷ. ԵՐԱՇՏՈՒԹԵԱՆՆ. [Յովհան Մանդակունի է արարեալ] - Ե.12:

ԼԸ. ԽԱԶԱԼԻԱՅՆ. [Յովհան Մանդակունի է արարեալ] - Ե.12:

ԼԹ. ՊՂԾԱԿԵՐ ԲԵՐԱՆՈՅՆ. [Յովհան Մանդակունի է արարեալ] - Ե.12:

Խ. ՊՂԾԵԱԼ ԿԵՐԱԿՐՈՅՆ. [Յովհան Մանդակունի է արարեալ] - Ե.12:

ԽԱ. *ԵՐԴՄՆԱՀԱՐԱՅՆ. [Յովհան Մանդակունի է արարեալ] - Ե.12:*

ԽԲ. *ԳՐԱԿԱՐԴԱՅԱՅ. յիշատակ է մեզ ի սրբոյն Գրիգորէ մերոյ Լուսաւորչէն - Ա.9, Բ.9, Գ.9, Դ.9, Ե.9, Զ.9, Է.10, Ը.9, Թ.10, Ժ.10, Ի.10, Լ.10, Խ.9, Ծ.9, Կ.10, Հ.9, Զ.5, Ղ.10, Ճ.10, Մ.9, Յ.9, Ն.8 (Շ չունի):*

ԽԳ. *ԿԻՍԱՍԱՐԿԱԻԱԳԱՅ. յիշատակ սրբոյն Գրիգորի է մեզ - Բ.9, Գ.9, Է.10, Ը.9, Ի.10, Խ.9, Ծ.9, Կ.10, Զ.5, Ճ.10, Մ.9, Յ.9, Ն.8 (Սարկաւագաց), Լ.10, Ղ.10 (Շ չունի):*

ԽԵ. *ՔԱՀԱՆԱՅԱՒՐՀՆԷՍՆ (ԹՀ՝ որ ունի Ե. Հ՝ Է., Աւետարան - չփոթ է). սրբոյն Սահակայ արարեալ, յառաջին (ԲԳԸԻԽԾՃՄԻԱՇ ԻԱ.) ամի եպիսկոպոսութեան իւրում, ի Նաւասարդի ամսոյ, որ օր մի էր - Ա.10, Բ.10, Գ.10, Դ.10, Ե.10, Զ.10, Է.11, Ը.10, Թ.11, Ժ.10, Ի.11, Լ.11, Խ.10, Ծ.10, Կ.11, Հ.10, Զ.6, Ղ.11, Ճ.11, Մ.10, Յ.10, Ն.9, Շ.9:*

ԽԶ. *ՆՇԽԱՐՍ ՍՐԲՈՅ Ի ՀԱՆԳԻՍՏ ՓՈԽԵԼ. յիշատակ է մեզ ի սրբոյն Գրիգորէ մերոյ Լուսաւորչէն - Ա.9, Բ.9, Գ.9, Դ.9, Ե.9, Զ.9, Է.10, Ը.9, Թ.9, Ժ.9, Ի.10, Լ.10, Խ.9, Ծ.9, Կ.10, Հ.9, Զ.5, Ղ.10, Ճ.10, Մ.9, Յ.9 Ն.8, Շ.8:*

ԽԷ. *ՔԱՀԱՆԱՅԱԹԱՂՆ. որ է ԺԸ. Աւետարան (ԲԳԷԸԻԽԾՃՄՅ > որ է ԺԸ. Աւետարան), տեառն եփրեմի Խորին Ասորոյ ի Նիկոմիդէս (Ղ՝ յԵղեսիայ) քաղաքի արարեալ (մնացած մանրամասները տե՛ս ի Հոգեհանգիստ) - Ա-ՋԸԺԽԾՀՄՅՆ.6, ԷթիԼԿՂճ.7, Շ.5 (Ջ չունի):*

Խէ. *ՔԱՀԱՆԱՅԱԹԱՂԼԻՔՆ. որ ունի է. Աւետարան՝ [սրբոյն Սահակայ արարեալ] - Ա.10, Դ.10, Զ.10, Լ.11 (ԼԶՂ. > որ ունի է. Աւետարան), Կ.11, Զ.6, Ղ.11, Ն.9, Շ.9:*

Խէ. *ՔԱՀԱՆԱՅԹԱՂ[Ի]Ն. [սուրբն Սահակ] յաւել է. Աւետարան - Բ.10, Գ.10, Խ.10, Ծ.10, Մ.10, Յ.10:*

ՏՂԱԹԱՂՆ. սրբոյն Սահակայ արարեալ յետ ԺԱ. ամի առաջնորդութեան իւրոյ - Ե.10:

ԽԱՂՈՂՕՐՀՆԷՔՆ. արարեալ էր սրբազան Գրիգոր Աստուածաբանն ի հինգերորդի ամի հայրապետութեան իւրոյ, Անձիանձոյ երեր Մովսէս Խորենացին - Ե.2 (Ե-ի վերագրում):

ՄԱՅՐԱԽՐՀՆԷՔՆ. սրբոյն կիպրիանոսի (ԲԳԴԵԶԹԺԽԾԿՀՄ՝ + կարքեդովնացւոյ) է արարեալ, որ եւ գՅուսթինէ սուրբ կոյս մայր աբբայ կանանց հաւատաւորաց - Ա-ԶԼԺԽԾՀՄՅ.5, ԼԹԻԼԿՂԾ.6 (Յ.5՝ գոբոյ չունէաք գՀեղինակն, ԶՆՇ՝ չունեն):

ԳԻՇԵՐՈՅ Դ. ՔԱՐՈԶՄՆ. եւ գնոցին ազաւթան արար սուրբ Սահակ - Ա.11, Բ.11, Գ.11, Դ.11, Ե.11, Զ.11, Է.12, Ը.11, Թ.12, Ժ.11, Ի.12, Խ.11, Ծ.11, Կ.12, Հ.10, Ճ.12, Մ.11, Ն.10, Շ.10:

ՊԱՀՈՅ (Քառասնորդաց, Ապուհացիւ) ՔԱՐՈԶՆԻՆ ԵԻ ԱՂԱԹՆԻՆ. [Յովհան] Մանդակունի է արարեալ, որ Դ-րդ ի սրբոյն Գրիգորէ - Ա.12, Բ.11, Գ.12, Դ.12, Զ.12, Է.13, Ը.12, Թ.13, Ժ.12, Ի.13, Լ.12, Խ.12, Ծ.12, Կ.13, Հ.11, Զ.7, Ղ.12, Ճ.13, Մ.12, Յ.11, Ն.11, Շ.11:

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՌՕՏ ԱՄՓՈՓՈՅՔ

ԽՈՐԱԳԻՐՔ. 25 օրինակից 14ի (ԱԱ₁ԴԶԷՐԹԻԼՀՂՃՅՇ) համաձայն՝ Տյանկի հեղինակը Մովսէս Խորենացին է, որ նաեւ թարգմանիչ է եւ Սահակ Պարթեւ կաթողիկոսի գրիչը. քսան որում՝ 7ը (ԷՐԻԼՂՃՇ) ունեն միայն Մովսէս անունը, Խորենացի մականունը չունեն: Մնացեալը՝ օրինակից օրինակ աւելիով կամ պակասով, ունեն նոյն բովանդակութիւնը. հայրապետներից (սրբերից) ո՛վ կամ ո՛ր ազգից կամ ո՛ր ժամանակ են «արարել» այս օրհնութիւնների կանոնները (կարգերը), եւ թէ ո՛վ կամ ո՛ւմ հրամանով բերեցին Հայաստան (Ե՝ խորագրի փոխարէն ունի յիշատակարանի սկզբնամասի նմանուող սկսուածք):

Խորագրից անմիջապէս յետոյ եւ չարահիւսօրէն որպէս բուն մասի սկիզբ՝ Գրիգոր Լուսաւորչից յետոյ ՃԺԱ-րդ (ԴԻՀՂՆ՝ ՃԺ., Կ՝ «հարիւր եւ երեսուն», Ե՝ սուրբ Գրիգորի Հռոմ գնալու՝ ՃԺ.) տարում եղաւ [Ս. Գրքի] հայերէն թարգմանութիւնը (ԺՋՅ ժամանակագրական այս մասը չունեն): Սրանից յետոյ՝ Մեսրոպի (Ա՝ անունը չունի) թարգմանութեան (ԱԿ՝ Վռամշապուհի թագաւորութեան) երկրորդ (ԲԳԶԽԾՄՅ՝ 3րդ, Հ՝ ԳՃԲ., Յ՝ Սահակի հայրապետութեան ԻԱ.) տարում (ԵԼՋՂ՝ տարին չունեն. Ժ՝ չունի այս հաղորդումը) Ս. Սահակը (ԻԼԿՂ՝ Ս. Մաշտոցը) Աստուածաբանի աթոռ՝ Նպիանոց ուղարկեց իր գրիչ Մովսէս (Ե՝ Խորենացի) թարգմանչին (ԱԴԶԻԸԹՀՃՆ՝ առաքուածի անունը չունեն, Զ՝ «ինքն Մաշտոց գնաց») եւ բերել տուեց Սերմնօրհնէքի կանոնը:

Հոգեհանգստի եւ Քահանայաթաղի կանոնների յիշատակման վերջում՝ «ի ԺԳ. ամի թարգմանութեան սրբոյն Սահակայ Պարթեւի... որ էր յետ [սրբոյն Գրիգորի] ՃԺԱ. ամի անցանելոյ, յորժամ այս ամենայն հաստատեալ նորոգեցան հրամանաւ սրբոյն Սահակայ, ձեռամբ իմով Մովսէսի գրչի Սահակայ Պարթեւի» (թուականների տարբերութիւնները տե՛ս Հոգեհանգիստ) - ԱԲԳԴԵԶԸԺԽԾՀՄ.6, ԹԼԿՂՃ.7 (Զ՝ չունի):

Տեառնականի եւ Ազօրհնէքի կանոնների յիշատակման վերջում՝ «յերկրորդ ամէ (ԳԾ՝ Գ. ամի) սրբոյն Սահակայ մինչեւ ի ԺԳ. ամն նորին՝ կատարեցան ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ» - Գ.7, Դ.7, Թ.8, Կ.8, Հ.7

Աւարտներով նման են՝

ԷԸԻՃ - Շարադրութիւն (Է՝ Յարադրութիւն).

ԹԼՂ - «Այսոքիկ ատոյգ են եւ ճշմարիտ».

ԱԶՀՇ - «Այսքան է, եղբա՛յր գիտնական...».

ԲԳԵԽԾԿԶՄՅ - Եզրափակիչ նախադասութիւն-աւարտ չունեն:

Բնականաբար, չատ զգոյշ պէտք է լինել սակաւ (1-2, յատկապէս՝ Ե) օրինակով աւանդուած վկայութիւնների նկատմամբ:

* * *

Այս բնագրում յիշատակուած չեն մեր շարքի հետեւեալ ինը կանոնը.

ԺԹ. Կուսանաց Խաչ փոխել.

ԻԳ. Աչխարհաթաղի Այգեպացի (երեւի ընկալուել է որպէս Աչխարհաթաղի մաս)

ԻԴ. Մոնոզոն առնելոյ

ԻԷ. Ազաւթք ի վերայ Տնտեսի

ԻԸ. Յորժամ կրաւնաւոր վախճանի

Լ. Մեռնօրհնէքի
ԼԳ. Ոանկուայի
ԼԴ. Քարոզ պատուիրանի
ԽԴ. Սարկաւագօրհնէքի

Բ. Եկեղեցիօրհնէքի, Դ. Աւազանօրհնէքի, Ե. Պղծեալ տաճար սրբելու, Ը. Սկիհի եւ մաղդմայի կանոնների հեղինակ են համարուած թէ՛ Յովհան Մանդակունին եւ թէ՛ Գրիգոր Լուսաւորիչը, իսկ ԺԶ. Հատի պատարագի կանոնինը՝ Երուսաղէմի Յուստոս եպիսկոպոսը եւ նոյն Լուսաւորիչը (վերջին չորսը՝ ձեռ. Ե):

Տղաթաղի կանոնի՝ եզակի ձեռագրով (Ե.10) յիշատակուած լինելը գուցէ նշանակուած հեղինակի (Սահակ կաթողիկոս) խնդրի համար լրացուցիչ փաստեր է պահանջում, բայց Հռոմոսի Մաշտոցում այս կանոնի առկայութիւնն արդէն հաստատում է նրա հնաւանդ լինելը (հետը ենթադրելի է նաեւ իր Այգպալացը): Գրիգոր Աստուածաբանի հեղինակած Խաղողօրհնէքի կանոնի գոյութիւն ունեցած լինելը խիստ կասկածելի է (որեւէ ձեռագրում Ներսէս Շնորհալու յօրինածից բացի այլ բան չենք նկատել): Առանձնապէս հետաքրքիր է Մայրօրհնէքի կանոնի մասին հաղորդումը. գուցէ մի օր յայտնաբերուի երբեւէ գոյութիւն ունեցած, հետագայում չգործածուելու պատճառով մոռացուած այդպիսի մի շարադրանք, որ, անհաւանական չէ, նման լինի Հայրօրհնէքին:

Կանոնների ծագման եւ նրանց հեղինակների խնդիրն այս ցանկով, բնականաբար, լուծուած համարել հնարաւոր չէ. վճիռներ կայացնելու համար համաձայն կամ հակասական բոլոր այս վկայութիւնները դեռեւս պէտք է համադրել մատենագրական տեղեկութիւնների եւ օժանդակ այլ փաստերի հետ: Վերջիններիս շարքում անպայման նկատառելի են Մաշտոցի ձեռագրերի յիշատակարանները, որոնց մէջ, անկախ իրենց պարունակած կանոններից, դրուատական խօսքերով թուարկւում են ընդհանրապէս ծէսերը. սրանց մէջ կարող են շատ հին յիշատակներ լինել: Բոլոր դէպքերում բնագրի այս հրապարակումը պէտք է լինի հետագայ քննութիւնների հիմքերից մէկը:

ՅԱՒԵԼՈՒԱԾ Ե.

ՄԱՇՏՈՑ Ա. ԵՂԻՎԱՐԴԵՑԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՎԱՐՔԸ

Մաշտոց Եղիվարդեցի կաթողիկոսը[*] (ծն. 833 թ., կաթող. 897-898 թթ.՝ 7 ամիս)[1] մեր եկեղեցու եւ գրական մշակոյթի պատմութեան մէջ իր արժանի, պատուաւոր տեղն ունեցող գործիչներից է, ըստ այդմ էլ գիտական գրականութեան մէջ նրա անձը եւ գործն արժանացել են պատշաճ ուշադրութեան[2], որ վերաբերում է նաեւ 893 թ.[3] իր իսկ աշակերտ Ստեփանոսի ձեռքով գրուած նրա վարքին[4]:

---

* *Բնագրի ընդհանրական արժէքը նկատի ունենալով, տպագրել ենք գրքիս այս մասի նաեւ ամսագրային մի տարբերակ. տե՛ս «Էջմիածին» ամսագիր, 2011/Բ., էջ 60-79:*

1 *Տե՛ս Գարեգին Ա. կաթողիկոս [Յովսէփեան], Ձիշատակարանք ձեռագրաց, հտ. Ա. (Ե. դարից մինչեւ 1250 թ.), Անթիլիաս, 1951, էջ 98. ծ. 5. «երեւան եկաւ Մաշտոցի գերեզմանը եւ տապանաքարը Գառնիում, Տրդատի հովանոցի արեւմտեան կողմը, Մառի պեղման ժամանակ, հետեւեալ արձանագրութեամբ, որ ըստ հնագրութեան ԺԳ. դարի գործ պիտի լինի (ուրեմն՝ նորոգուած). «Յ. Խ. Ջ. թվ. ի Քս: փոխեց Տր Մաշտ»:*

2 *Գործունէութեան ընդհանուր գնահատութիւնը տե՛ս Ազգապատում, հտ. Ա., Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2001, էջ 1151-2 (յօդ. 677), 1166-7 (687), 1181-6 (696-8). գրական ժառանգութեան համառօտ ակնարկ տե՛ս Նորայր Եպս. Պողարեան, Հայ գրողներ. Ե-ԺԷ. դար, Երուսաղէմ, 1971, էջ 131-2, համմտ. Հ. Աճառեան, Հայոց անձնանունների բառարան, հտ. Գ., Երեւան 1946, էջ 215-6. կենսագործունէութեանը վերաբերող տեղեկութիւնների վերջին մէկտեղումը տե՛ս Արփենիկ Ղազարոսեան, Մաշտոց Եղվարդեցի կաթողիկոս, «Էջմիածին», 1991/Ա-Բ-Գ., էջ 109-18:*

3 *Վարքիս տոմարական հաշիւների քննութիւնը, նրա գրչութեան՝ 893 թուականի եւ ամսաթուերի ճշգրիտ լինելու հաստատումը տե՛ս [Առաքելեան Հ. Ղուկաս եւ Սեքուլեան Հ. Օգոստինոս], Մլքէի Աւետարանը ՅՁԱ. = 932ին գրուած, Հանդէս ամսօրեայ, 1943/Ա-ԺԲ., էջ 23-38 (հեղինակների անունները ըստ՝ Հանդէս ամսօրեայի յօդուածներու 100 տարուան մատենագիտական ցուցակ. 1887-1986, կազմեց Հ. Օգոստինոս վրդ. Սեքուլեան, Վիեննա, 1990, էջ 235): Այս յօդուածը գրուած է ի պատասխան հետեւեալի՝ Հ. Վ. Հացունիի «Մլքէի Աւետարանին թուականը» (Բազմավէպ, 1939, էջ 109-12), որ վարքի թուականների հատուածը քաղել է Մխիթարեան Վենետիկի ԽԳ. Մաշտոցից, որ է Մխիթ. ձեռ. Հ՟Ր 1571/224: Նոյն հարցի վերաբերեալ տե՛ս նաեւ Հ. Ն. Ակինեան, Դարձեալ Ստեփանոս վանականի յիշատակարանին գրութեան թուականը, Հանդէս ամսօրեայ, 1913, էջ 574-5 (առաջարկում է թուականը հաշուել՝ 894, Մարտի 28 Աւագ հինգշաբթի, եւ ըստ հայոց՝ ՅԽԲ., Հրոտից ԺՋ.):*

4 *Նպատակ չունենք անդրադառնալու Մաշտոց կաթողիկոսի կենսագրականի յայսմաւուրային տարբերակին, որ հիւսուած է այս բնագրից եւ Յովհաննէս Դրասխանակերտցու Պատմութեան հաղորդումներից. տե՛ս ՄՄ ձեռ. Հ՟Ր 1511. 103ա-4ա «Սահմի Դ., եւ Հոկտեմբերի ԺԳ. Վարք եւ յիշատակ սուրբ հաւրն մերոյ Մաշտոց վարդապետին - Սուրբ վարդապետն մեր եւ հայրն ճգնազգեաց Մաշտոց էր ի գաւառէն Կոտէուց, ի գեղջէն Եղեվարդոյ...» (Գրիգոր Մերենցի խմբագրութիւն):*

Փոքրածաւալ այս մատենագրական երկը չարադրուել է որպէս յիշատակարան՝ անյայտ բովանդակութեամբ ինչ որ ձեռագիր «գրքոյկի» (չարադրանքի մէջ հին օրինակներում որպէս կանոն չորիցս ունի «գրկունք» ձեւը, մէկը՝ «սակաւաւոր» յաւելումով). վստահ ենք, որ այս «գրկունք»ը Մաշտոց ծիսարանը լինել չէր կարող, որովհետեւ վերջինիս հնագոյն օրինակներն ամենեւին փոքր չեն, այլ բաւական մեծածաւալ գրքեր: Հետագայ դարերի ընթացքում անպայման նկատի ունենալով այն հանգամանքը, որ Եղիվարդեցի ճգնաւոր-կաթողիկոսը եղել է մեր ծիսարանի կանոններն առաջին ագամ մէկտեղող՝ «ի մի տուփ» ժողովողը, նրա վարք-յիշատակարանը կցուել է Մայր Մաշտոցի օրինակներին եւ մեզ հասել մեծ մասամբ որպէս վերջինի բաղկացուցիչ մաս-միաւոր, մի տեսակ նոյն Ծիսարանը եզրափակող վերջաբան: Այսու հին, չպահպանուած եւ մեզ չհասած ձեռագրի յիշատակարանը որպէս վարքագրական գործ ապրել է ինքնուրոյն գրական երկի կեանքով, ուստի եւ, ինչպէս պարզեց վարքի մեզ յայտնի[1] եւ հասու 16 ձեռագիր օրինակների տուեալների համադրումը, այս գործը մէկ կամ երկու ձեռագրով որպէս սոսկական յիշատակարան տպագրելը բաւարար լինել չէր կարող, այսինքն՝ 1876-2008 թթ. ընթացքում իրագործուած մեզ յայտնի եօթ տպագիրները (տե՛ս ստորեւ) անբաւարար են եւ ձեռագրերում առկայ տարբերութիւնների ցուցադրումով գործի գրական պատմութիւնը չեն պատկերում:

Ուստի որոշեցինք բոլոր ձեռագրերն օգտագործելով պատրաստել այս յիշատակարան-վարքի նոր հրատարակութիւն, որի համար սկզբից եւ վերջոյ համառօտ ներկայացնենք մեր պատրաստած բնագրերի համար օգտագործուած ձեռագրերը:

[1] *Օգտագործել ենք նաեւ Մաշտոցեան Մատենադարանի ձեռագրերի Մայր ցուցակի անտիպ մասը, բայց դեռեւս չնկարագրուած ձեռագրերի մէջ կարող են լինել այլ օրինակներ եւս, սակայն թուում է, որ նոր օրինակներն էական նորութիւն չեն բերելու: Սա հաստատուեց աշխատանքիս աւարտից յետոյ եւ տպագրութիւնից առաջ. նոյն Մայր ցուցակի համար նոր նկարագրուած մի ձեռագրում (Ձ[թվ] 4054. 74բ-7ա) յայտնաբերեցինք մեր Գ. խմբագրութեանը պատկանող մի նոր օրինակ, որ համամատեցինք Հ պայմանանիշով, բայց սրա աւելացրածը հիմնականում գրչի վրիպում-բացթողումներն էին:*

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. Ստեփաննոսի վերնապիր ինքնագրութեան վասն վարուց երանելոյն Մաշտոցի.- Արարատ, 1876/Ա. էջ 17-19. «Յիշատակարան» վերնախորագրի ներքոյ:

2. Յակոբ Յ. Թօփճեան, Յուցակ ձեռագրաց Դպրեան Խաչիկ վարդապետի, ժողոված 1878-1898, Մասն Ա., Վաղարշապատ, 1898, էջ 43-5. Դպրեան հաւաքածուի Ձ[թվ] 29 ձեռագրից:

3. Գարեգին Ա. կաթողիկոս [Յովսէփեան], Յիշատակարանք ձեռագրաց, հտ. Ա. (Ե. դարից մինչեւ 1250 թ.), Անթիլիաս, 1951, էջ 87-98, Ձ[թվ] 34. երկու խմբագրութիւն[1]:

4. Բարգէն աթոռակից կաթողիկոս [Կիւլէսէրեան], Յուցակ ձեռագրաց Անկիւրիոյ Կարմիր վանուց եւ շրջակայից, Անթիլիաս, 1957, էջ 974-8:

5. Յուցակ հայերէն ձեռագրաց Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի, հատոր Ա., Կազմեց Սմբատ Տէր-Աւետիսեան, Վիեննա, 1970, էջ 525-7:

6. Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ. Ե-ԺԲ. դդ., Աշխատասիրութեամբ Ա. Ս. Մաթեւոսեանի, Երեւան, 1988, էջ 40-43, Ձ[թվ] 50:

7. Ստեփաննոսի վերնապիր ինքնագրութեան վասն վարուց երանելոյն Մաշտոցի.- Մատենապիրք Հայոց, Թ. հատոր, Թ. դար, Անթիլիաս-Լիբանան, 2008, էջ 698-701 (Հրատ. Յ. Քէոսէեանի):

Առաջին տպագրի վերջում կայ այսպիսի բացատրական. «Այս Յիշատակարան-Պատմութիւնը ձեռնագրութեան ձեռագիր Մայր Մաշտոցնեըէն ոմանց մէջ գտանելով եւ ընդ միմեանս բաղդատելով՝ ըստ կարելւոյն ի տեղիս տեղիս պարզեցինք անհասկանալի եղած խօսքերը, թէեւ շատ տեղ դարձեալ մնաց խառն եւ անիմաստ, եւ իբր պատուական հնութիւն առ այժմ ներկայս հրատարակել փութալով՝ կը յուսամք որ ի ժամանակին կպարզուին մութ եւ անիմաստ մնացած տեղերն եւս, այլ ընտիր օրինակներէն քաղելով»[2]: Ըստ այսմ՝ օգտագործուել են մէկից աւելի անորոշ քանակի ձեռագրեր, միաժամանակ ակնյայտ է, որ բոլո-

[1] *Այսուհետեւ՝ Յիշ-ք: «Մաշտոցի կենսագրութեան երկու տարբեր խմբագրութիւն ունենք ձեռքի տակ, որ երբեմն մէկը կամ միւսը աւելի մասեր կամ յապաւումներ ունին, երբեմն էլ բառերի կամ հատուածների յետ եւ առաջ դասաւորութիւն» (Յիշ-ք, էջ 92):*

[2] *Արարատ, 1876/Ա., էջ 19:*

ըը պէտք է լինեն մեր իսկ գործածած Էջմիածնի մատենադարանի բուն՝ հին հաւաքածուի Մայր Մաշտոցները: Սակայն այս տպագրութիւնը պարզ, առանց ընթերցումների չարադրանք է. թուղթիկ համեմատութեամբ համոզուեցինք, որ հետեւել է հիմնականում մեր Ե՝ ներկայիս ՄՄ Ձ՝ 998 ձեռագրին (տե՛ս ստորեւ՝ ձեռագրերի ցանկում):

Երկրորդ տպագիրն արուած է ըստ մեր Ի օրինակի, երրորդում հրատարակուած է բնագրի երկու խմբագրութիւն. Ա.՝ ըստ մեր Է օրինակի, Բ.՝ ըստ մեր Կ ձեռագրի: Զորրորդը եւ հինգերորդը, համապատասխանաբար 1909-1913ի ընթացքում եւ 1902 թ. պատրաստուած լինելով հանդերձ, տպագրուել եւ վիտական շրջանառութեան մէջ են դրուել 1957ին եւ 1970ին. սրանց հիմք ձեռագրերը մեզ հասու չեն (առաջինը կորսուած է), ուստի սրանք մեր բնագրերի մէջ որպէս առանձին ձեռագրեր համեմատել ենք Լ եւ Ի պայմանանիշերով: Նկատենք նաեւ, որ այս՝ 4րորդի եւ 5րդի մասին յաջորդող երկու տպագիրները չեն իմացել, 6րդը, երեւի առնելով 3րդից, կրկին հիմնուած է մեր շարքի Է օրինակի վրայ, միայն 7րդը հիմք է դարձրել մեր Ա ձեռագիրը եւ նրա հետ շատ անկանոն եւ անսկզբունք[1] համեմատել 3րդ տպագրի Ա. խմբագրութիւնը (իմա՛ շարքիս Է) եւ բնագիրը կազմել երկուսի ընթերցումները միահիւսելով:

Ամփոփենք. 1-3րդ եւ 6-7րդ տպագիրները մեր բնագրերի հետ չենք համեմատել, որովհետեւ նրանց հիմք ձեռագրերն արդէն կան մեր շարքի մէջ. 3րդի Բ. (մեր՝ Գ.) խմբագրութեան շարադրանքն առել ենք բուն ձեռագրից, միայն ըստ հարկի արձանագրել ենք այս տպագրի շատ օգտակար ծանօթութիւնները: Առանձնապէս երկրորդն ունի հրատարակչի անհմուտ եւ անճիշտ ընթերցումներ, որոնց արձանագրումը մեր բնագրի մէջ անիմաստ համարեցինք. նոյնպէս անտեղի դիտեցինք մեր բնագրի մէջ անիմաստ համարեցինք. նոյնպէս անտեղի դիտեցինք մնացածների մէջ առկայ ընթերցումային եւ տպագրական վրէպների նշանակումը, որով մեր տողատակերը կարող էին միայն ուռճանալ:

Տպագիրներին անդրադառնալուց առաջ վարքի ձեռագիր օրինակներ փնտրել ենք մեր առաւելապէս մեծ հաւաքածուներում, առաջին հերթին՝ Մաշտոցեան Մատենադարանում եւ ստացել ժամանակագրական հետեւեալ պատկերը.

[1] *Յանկացողը կարող է այս տպագիրը համեմատել մերինի հետ եւ համոզուել, որ բազմաթիւ տարբերութիւններ արձանագրուած չեն (նրա A պայմանանիշը համապատասխանում է մեր Ա ձեռագրին, B-ն՝ մեր Է օրինակին):*

ՁԵՌԱԳՐԵՐԸ[1]

Ա - 1473 թ., ձեռ. Հմր 958. Ուրծ գիւղ, գրիչ՝ Խաչատուր, ստացող՝ Մեսրոպ արքյ. 360 թերթ, 26,5-27x16,5-17. երկսիւն, բոլորգիր, 27 տող. բնագիրը՝ 255բ-8բ, կարգային համարը՝ ԾԸ.:

Բ - 1432 թ., ձեռ. 965. Երերան, գրիչ՝ Դաւիթ կր., Ղազար, գլխագրող՝ կարապետ, ստացող՝ Դաւիթ կր. (գրիչը): 382 թերթ, 22,3x16. երկսիւն, բոլորգիր, 32 տող. բնագիրը՝ 374ա-6բ[2]:

Գ - 1498 թ., Ձեռ. Հմր 960. Փոնձաթաղ, Զորէվանք, Ծակքար, գրիչ՝ Վանական կր., ստացող՝ Թումա գպիր. 309 թերթ, 25,7x17,7. երկսիւն, բոլորգիր, 25 տող. բնագիրը՝ 302ա-5բ, համարը՝ ԾԵ.:

Դ - 1530 թ., ձեռ. Հմր 962. Արճէշ, գրիչ՝ Յովանէս, ծաղկող՝ Գրիգորիս կթղ. Աղթամարցի, ստացող՝ Սօլթանխոջա, 387 թերթ, 25,8x17,8. երկսիւն, բոլորգիր, 25 տող. բնագիրը՝ 318բ-22ա, համարը՝ [Ծ.], 319ա ստ. լս. «Պատմութիւն Մաշտոցի վարդապետին», 321բ՝ «Պատմութիւն Մաշտոցի»:

Ե - 1546 թ., ձեռ. Հմր 998. գրիչ՝ Յոհաննէս, Ստեփանոս, ստացող՝ Յոհաննէս վրդ., 297 թերթ, 28,3x18,5. երկսիւն, բոլորգիր, 29-31 տող. բնագիրը՝ 234ա-6բ համարը՝ ԾԸ., 234բ, 235ա ստ. լս. «Վարք Մաշտոցի»:

Զ - 1651-6 թթ., ձեռ. Հմր 953. Ըսպահան, գրիչ՝ Աղամալ, Խաչատուր, Յոհան քհյ. Տաթեւացի, ծաղկող՝ Հայրապետ, ստացող՝ Խօջասար, Զաքարիա վրդ. Յովհաննավանեցի, 605 թերթ, 25,7x19,5. երկսիւն, բոլորգիր, 25 տող. բնագիրը՝ 600բ-3ա, համարը՝ ՀԴ.:

Է - ԺԶ. դ., ձեռ. Հմր 970. գրիչ՝ կարապետ քհյ. 362 թերթ, 21,5x16. միասիւն, բոլորգիր, 21-24 տող, բնագիրը՝ 358ա-62ա, համարը՝ ՇԲ.:

Ը - ԺԶ. դ. ձեռ. Հմր 972. 296 թերթ, 21x14. միասիւն, բոլորգիր, 19-22 տող. բնագիրը՝ 274ա-9ա, համարը՝ ԽԴ.:

[1] *Բացի Ի եւ Լ միաւորներից՝ մնացեալը Մաշտոցեան Մատենադարանի ձեռագրեր են, ուստի թուարկմանս մէջ հաւաքածուի անունը չենք գրել. նաեւ հիմնականում Մայր Մաշտոցներ են, ուստի այս անունը եւս չենք գրել, միայն Ծ օրինակը Ջեռնադրութեան Մաշտոց է, Կ՝ ժողովածու: Ա-ԺԱ ձեռագրերի ընդարձակ նկարագրութիւնները տե՛ս Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, Հտ. Գ., կազմեց՝ Օ. Եգանեան, Երեւան, 2007, 1185-1174 սիւնակների միջեւ: Ի վերջոյ՝ բոլոր ձեռագրերի նիւթը թուղթ է, ուստի նկարագրութիւնների մէջ «նիւթ» հարց եւ պատասխան նոյնպէս չենք դրել:*

[2] *Ընկածի փոխարէն թ. 375 ի նորոյ գրուած է ԺՀ. դ. բոլորգրով, նոյն ժամանակ էլ նոյն անարուեստ գրով 374բ էջի վնասուած վերին արտաքին անկիւնը լրացրած է սխալներով, որոնք անտեսել եւ ընթերցումների մէջ չենք նշել:*

Թ - ԺԷ. դ., ձեռ. Հ՝ր 907. գրիչ եւ ստացող՝ Երինէ կոյս, 413 թերթ, 17,9x12. երկսիւն, բոլորգիր, 23 տող, բնագիրը՝ 320բ-5ա, համարը՝ [ԽԷ.]:

Ժ - ԺԷ. դ., ձեռ. Հ՝ր 999. Շատիկայ վանք, գրիչ՝ Յոհաննէս արզյ., 239 թերթ, 31,3x19,5. երկսիւն, բոլորգիր, 32-33 տող. բնագիրը՝ 233ա-5բ, համարը՝ կե., 233ա ստ. լս. «Վարք Մաշթոցի», 235ա՝ «Պատմութիւն Մաշտոց վարդապետի»:

Ի - 1701 թ., Նոր Ջուղայի Ս. Ամենափրկչի ձեռ. Հ՝ր 174/326. Նոր Ջուղա, գրիչ՝ Սարգիս երէց, ստացող՝ Բիջան, 369 թերթ, 21,6x14,5. միասիւն, բոլորգիր, 24 տող, բնագիրը՝ 207բ-11բ (տե՛ս տպագիր 5):

Լ - ԺԳ-ԺԴ. դ.[1], Անկիւրիայի ձեռ. Հ՝ր 209. գրիչ՝ Մկրտիչէ սարկաւագ, 512 էջ, 18x13. միասի՞ւն (գրատաշար՝ 14x9,5), բոլորգիր, 23 տող. բնագիրը՝ էջ 492-501 (տե՛ս տպագիր 4):

Խ - ԺԵ. դ., ձեռ. Հ՝ր 4118. գրիչ, ծաղկող, ստացող՝ Անանիայ կրն., 289 թերթ, 28x19, երկսիւն, բոլորգիր, 27 տող, բնագիրը՝ 218բ-9բ, 231աբ, 220ա-221ա, համարը՝ ԾԸ. (հմմտ. տպագիր 2):

Ծ - ԺԹ. դ., ձեռ. Հ՝ր 3066. Մաշտոց ձեռնագրութեան, 25 թերթ. 19,8x16,5, միասիւն, չղագիր, 26 տող, բնագիրը՝ 22ա-4բ:

Հ - ԺԴ. դ., ձեռ. Հ՝ր 4054. գրիչ՝ Յովհաննէս, ստացող՝ Վարդան արքեպս., 146 թերթ, 25,5x15. երկսիւն, բոլորգիր, 25 տող. բնագիրը՝ 74բ-7ա. 75ա ստ. լս. «Յիշատակարան Մաշտոց վարդապետի», 76ա «Մաշտոց վարդապետի»[2]:

Պ - Պատառիկ Հ՝ր 1193. ԺԲ. դ. 1 թերթ, մագաղաթ, 20,6x16 սմ. երկսիւն, ուղղագիծ երկաթագիր, 12 տող[3]: Լուսանցները. վերին՝ 2 սմ, ներքին՝ 1,8. արտաքին՝ 3,3. սիւնակամէջ՝ 2. Համամասնութեան կանոնով ստորին լուսանցի լայնքը պէտք է լինէր մօտ 3,5 սմ. տողի լայնքը 5 մմ է, տողամէջը՝ 7-8 մմ: Բնագիրը համապատասխանում է. էջ ա[1]. 16 «Հայցեր առնուլ յԱստուծոյ...» 17 «եկեալ դումարեցաւ ի տե///», էջ ա[2]. 17 «[մեծա]պէս ընկալեալ զնա...» 18 «յոսկում խաչի զարդարեալ», էջ բ[1]. 19 «առ միմեանս...» 21 «չնորհաց արժանացաւ», էջ բ[2]. 22 «եւ յայսմ ամի...» 23 «վերայ ճշմարիտ»: Մէկ տողում կայ 14-16 նիշ. ըստ

[1] *Անկիւրիոյ ցուցակ, էջ 972 «ժամանակ՝ յայտնի չէ, բայց բաւական հին պէտք է ըլլայ իբրեւ գործ ԺԳ-ԺԴ. դարու»:*

[2] *Ներկայ հրապարակումը պատրաստելուց յետոյ գտնուած օրինակն է. տե՛ս վերը՝ ծ. 5:*

[3] *Պատառիկս յայտնաբերել ենք բնագրիս ամսագրային հրատարակութեան լոյս տեսնելուց յետոյ:*

միջանկեալ պակասող մասերի (սիւնակների միջեւ չկան՝ մօտ 158, 160 եւ 155 նիշ)՝ էջի ստորին մասից կտրուած է 8 տող, ուրեմն սկզբնական թերթը պէտք է ունեցած լինի 33x16/17 սմ չափս, էջում՝ 20 տող:

Կ - 1378 թ., ձեռ. Հ՝ր 2680. Ժողովածու[1], Անկեղակոյտ գիւղաքաղաք, գրիչ եւ ստացող՝ Մատթէոս երէց, 568 թերթ, 26,5x18. երկսիւն, բոլորգիր. 41 տող. բնագիրը՝ 581բ-2բ. 581բ, 582ա՝ ստ. լս. «Վարք տեառն Մաշտոցի» (տե՛ս Յիշ-ք, էջ 92-96):

Մեր ունեցած հնագոյն ամբողջական օրինակը Բ ձեռագիրն է (1432 թ.), որ գործածուելուց բաւական մաշուած է եւ դժուարընկալելի մասեր չատ ունի, այդ պատճառով սկզբնապէս սխալ ուղենիշ ընտրած չլինելու նպատակով հիմք ընդունեցինք լաւ պահպանուած ժամանակագրօրէն երկրորդ ձեռագիրը՝ Ա (1473 թ.), որի հետ կարգով համեմատեցինք միւսները: Սովորականն այն է, որ, ընթերցումները նշանակելուց յետոյ, տարբեր գործօններ նկատի ունենալով, աշխատում ենք վերականգնել հեղինակային բնագիրը, սակայն ներկայ դէպքում ստացուած պատկերը բաւական հետաքրքրական եղաւ. արձանագրուած ընթերցումների համեմատ յստակ զատուեցին ձեռագրերի երկու խումբ, աւելի ճշգրիտ՝ խմբագրութիւն. առաջինը՝ ԱԲեԺԽԾ օրինակները (6 միաւոր), երկրորդը՝ ԳԴԶէԸԹիԼՀ (9 ձեռագիր)[2]: Ըստ այսմ՝ ունէինք բնագիրները ներկայացնելու երեք եղանակ՝ ա. առանձին առանձին, ի-

[1] *Գրիչն իր ձեռագիրը համարում է Հարանց վարք՝ 369ա. «Յիշատակարան մատենիս եւ ստուածառուսոյց Հարանց վարուց»:*

[2] *Կան նաեւ մեզ հասու չեղած, ակնյայտօրէն այս երկրորդ խմբին պատկանող հետեւեալ ձեռագրերը. 1. Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց մատենադարանի ձեռ. Հ՝ր 2002. Մաշտոց, շուրջ 1638 թ., գրիչ՝ Գրիգոր եւ Պօղոս գպիրք, ստացող՝ Յովսէփ վրդ. բնագիրը՝ էջ 769-78. Վերնագիր ինքնագրութեան Ստեփաննոսի, որ լեալ էր աշակերտ սրբոյն Մաշտոցի, եւ վասն վարուց նորին (տե՛ս Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. է., կազմեց Նորայր արքեպս. Պողարեան. Երուսաղէմ, 1974, էջ 4. նկարագրել է բնագրի ընդարձակ սկսուածք բերելով), 2. Մխիթարեան Վենետիկի ձեռ. Հ՝ր 1571/224. Մաշտոց, Նոր Ջուղայի Նոր Երեւան թաղ, 1704-1710 թթ., գրիչ, ծաղկող, կազմող եւ ստացող՝ տէր Խաչատուր, բնագիրը՝ 337բ-340ա Վերնագիր ինքնագրութեան Ստեփանոսի, որ լեալ էր աշակերտ սրբոյն Մաշտոցի, եւ վասն վարուց նորին (տե՛ս Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. Գ. Մաշտոց-Գիրք ձեռնադրութեանց, Յօրինեցին Հ. Բ. Սարգիսեան եւ Հ. Գ. Սարգսեան, Վենետիկ-Ս. Ղազար, 1966, էջ 558-72. այս բնագիրը՝ էջ 567): Երեւի վերջինիցս են արուած Գ. վ. Զարբհանալեանի ընդարձակ քաղուածքները, որոնք վարքի առաջին՝ 1876 թ. տպագրի համեմատ տարբերութիւններ ունեն. հմմտ. Հայկական հին դպրութեան պատմութիւն, Դ-ԺԳ. դար, Բարձրագոյն դպրոցաց համար, Բ. տպագր., Վենետիկ, 1886, էջ 487-9:*

բար եաեւից դնել մէկը, ապա միւսը[1], *բ. խմբագրութիւնները տեղադրել հանդիպադիր երկու սիւնակի մէջ՝ տարբեր տառատեսակներով գատորոշելով նման եւ տարբեր մասերը, գ. շարադրանքի մէջ դնել մէկը, իսկ միւսի տարբերութիւնները դնել տողատակում: Բաւական երկար մտորեցինք եւ յանգեցինք վերջին՝ երրորդ եղանակի ընտրութեանը, որով դրանցած լինելով հանդերձ՝ գրչական վրիպում-սխալներին կարեւորութիւն չտուեցինք, սրանց կողքը՝ երկրորդ խմբագրութեանը յատուկ ընթերցումները տարբեր տառատեսակով արձանագրեցինք միայն տողատակում*[2], *որպէսզի բուն մասում առաջին տարբերակն ընթերցելիս հնարաւոր լինի նոյն պահին տողատակում տեսնել երկրորդի դանագանութիւնները, որ է՝ խմբագրի կատարած աշխատանքը:*

Ա. խմբագրութեան հիմք (Ա.) ձեռագիրը բաւական լաւ օրինակ է, ուստի նրա ձեւերը տողատակ տանելու եւ նոյն խմբի միւս ձեռագրերի նախընտրելի ընթերցումները չարադրանք մուծելու հարկ եղաւ միայն 15 դէպքում (տողատակին տե՛ս Ա. պայմանանիշով ձեւերը). եւ սրանց մեծ մասը զուտ ուղղագրական բնոյթի են[3]*:*

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՅԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ ԵԻ ՆՐԱՆՑ ԺԱՄԱՆԱԿԻ ԽՆԴԻՐԸ

Առաջինը՝ ԱԲԵԺԽԾ ձեռագրերի աւանդածը, ակնյայտօրէն սկզբնականն է եւ երեւի բաւական մօտ է հեղինակային տեսքին, երկրորդը (ԳԴԶԷԸԹԻԼՀ ձեռագրերինը) ունի հետագայի ոճական մշակում-վերաշարադրանք լինելու բնոյթ, նաեւ աւելին՝ իր ուշ առաջացած լինելու հետեւեալ անուղղակի վկայութիւնը. 17րդ նախադասութեան մէջ առաջին խմբագրութեան «ընկալեալ զնա բարեպաշտ իշխանին եւ» խօսքի վերջին երկու բառի փոխարէն երկրորդն ունի այս. «ԳԴԶԷԸԹԻԼՀ իշխանն (ԶԷ + Հայոց) Աշոտ, որ եւ թագաւոր իսկ (Ի > իսկ) եղեւ յետոյ: Ապա»: Յետոյ թագաւոր դարձած այս իշխանը Աշոտ Բ. Երկաթ Բագրատունին

[1] *Այս դէպքում տողատակի ընթերցումները բաւական նօսր կլինէին, որովհետեւ ամէն առանձին խմբի ձեռագրերի միջեւ իմաստային էական տարբերութիւններ գրեթէ չկան, կան միայն գրչական մանր եւ աննկատաւելի վրիպումներ:*

[2] *Ընթերցումները լիովին ճշգրիտ են արձանագրուած, ուստի ցանկացած պահի կարելի է տողատակի տարբերակներից արտածել երկրորդ խմբագրութեան առանձին բնագիրը:*

[3] *Այս հէնքի վրայ մեր թուարկման 7րդ տպագրում արուածը՝ տարբեր խմբագրութիւնների պատկանող օրինակների ընթերցումների միահիւսումը բոլորովին անընդունելի է:*

է, որի թագաւորութեան տարիները 914-929 թթ. են, ըստ այսմ՝ Մաշտոց վարդապետի Ստեփանոս աշակերտը 893 թ. յիշատակարան-վարքը չարադրելիս այս խօսքը գրել չէր կարող, այսինքն՝ Բ. խմբագրութիւնը կարող էր առաջանալ առնուազն 914 թ., անգամ 928 թ. յետոյ՝ Ժ. դարի ընթացքում[1]*. եւ անհնար չէ, որ այս ժամանակ յիշատակարանի հեղինակ Ստեփանոսը վախճանուած լինէր, այսինքն՝ անկասկած է, որ հեղինակայինը ԱԲԵԺԽԾ ձեռագրերի բնագիրն է, միւսը՝ եահեղինակային՝ հիմնականում ոճաղարձուածային վերամշակում է, որին յատուկ բոլոր ընթերցուածները, ինչպէս ասացինք, մեր բնագրի տողատակերում զրուած են տարբեր տառատեսակով: Ներկայացնենք այս վերամշակման մէկ-երկու նմուշ, որոնցից առաջինը խորագիրն է. առաջին խմբագրութեան «Ստեփաննոսի վերնագիր ինքնագրութեան վասն վարուց երանելոյն Մաշտոցի»ի փոխարէն երկրորդն ունի «ԳԴԶԷԸԹԼՀ** վերնագիր ինքնադրութեան *(ԺԶԷԹ* ինքնադրութիւն, *Ը* ինքնագրութիւն, *Լ* ինքնագրութեան*)* ստեփաննոսի *(ԴԶԼ* ստեփաննոսի, *Ը* ստեփաննոսի գրչի*)*, որ լեալ էր *(Ը է] էր)* աշակերտ սրբոյն *(Ը* երիցս երանեալ սուրբ հարն*)* մաշտոցի *(ԴԶԷԸԼ* մաշթոցի*)*, եւ վասն վարուց նորին *(Է* նոցին, *Հ* նորա սրբութեան*)* մաշտոցի *(ԴԵԷ* մաշթոցի, *Հ* > մաշտոցի*)*. յիշատակարան *(Թ* յիշատակ, *ԴԶԷԸԼՀ* > յիշատակարան*)*[2]*: 1ին նախադասութեան «արարածոց» բառի փոխարէն երկրորդում կայ «ԳԴԶԷԹԻԼՀ** աշխարհի» ձեւը. առաջինի «հայ չըՀագային»ի փոխարէն երկորդն ունի «ԳԴԶԷԹԻՀ** հայոց նոր տումարիս *(ԴԷԼ* տումարիս, *Զ* տումարիս, *թ* տաւմարիս, *Ի* տումարին*)*, *Ը* հայ նոր տումարիս», *3րդ նախադասութեան «ի ձեռն» արտայայտութիւնը Բ. խմբագրութեան մէջ է՝ «ԳԴԶԷԸԹԻԼՀ** ի ձեռն իմ», *3րդ նախադասութեան «երանեալ» բառի փոխարէն Բ.ում կայ. «ԳԴԶԷԹՀ** երանելոյ սուրբ, *Ը* երանեալ սուրբ, *Ի* երանեալ վարդապետի եւ սուրբ»: *19րդում Աշոտ իշխանը եւ Մաշտոց վարդապետը ըստ Ա. տարբերակի՝ «բազում ինչ խաւսեցեալ ընդ միմեանս», իսկ երկրորդում զուտ երեւակայութեան ուժով արուած ճոխացում կայ. «ԳԴԶԷԻԼ** միմեանս + զհաւատոց եւ զայլոց *(Ի* այլոց*)* բազում *(Լ* > բազում*)* իրաց: Ապա հրաժարեցին ի միմեանց. եւ *(ԴԶԷԻԼ* > եւ*)* իշխանն, *Ը* միմեանս + վասն հաւատոյ եւ վասն բազում այլ ինչ իրաց, ապա հրաժարեցին ի միմեանց, իշ-

[1] *Ուշագրաւ է, որ մեր պատառիկը, ԺԲ. դարի լինելով հանդերձ, պատկանում է Բ. խմբագրութեանը. նոյն 17րդ նախադասութեան «Աշոտ իշխանն»ի փոխարէն ունի «իշխանն Սիւնեաց Աշոտ», իսկ «բարեպաշտ իշխանին եւ»ի փոխարէն՝ «իշխանին Աշոտոյ. եւ թագաւոր իսկ եղեւ յետոյ. ապա»:*

[2] *Ի՝ հրատարակիչը խորագիր չի բերել:*

խանն», *իսկ Հ՝ եւ խաւսէին ընդ միմեանս զհաւատոց. եւ ապա հրաժարեցան ի միմեանց. իշխանն ի ոգւոյնեղով դմիմեանս... միմեանս: Ականատես-ժամանակակիցն ասում է սոսկ, որ իրար հետ շատ բան խօսեցին, իսկ հետագայի խմբագիրը կազապարային մանաւանդ եցում է անում՝ հաւատքի եւ բազմաթիւ այլ բանների մասին: Խմբագրական բոլոր միջամտութիւններն այսպիսին են. միով բանիւ՝ մեր բացայայտած երկրորդ խմբագրութիւնն ընդհանրապէս պատմական-իմաստային նորութիւն չունի, սակայն անպայման ունի գրական արժանիքներ, որոնց հետազօտումը մեր գրականագէտների անելիքն է:*

Երրորդ խմբագրութեան՝ շատ աւելի ուշ լինելը հաստատել է դեռեւս Գ. կթզ. Յովսէփեանը, ուսոի նախ վերարտադրենք նրա նկատածները. սրա 1ին նախադասութեան «ճգնէր» բառը ձանօթագրել է. «Այս հատուածի մէջ պակասում են նախընթաց օրինակի ժամանակագրական կարեւոր տեղեկութիւնները», 2րդի վերջում «Պակաս է «Եւ ի գաւթանալ բռնակալութեանն տաճկաց ի վերայ գաւառին, ելեալ», որ պէտք է լրացնել նախընթաց օրինակից, միտք ստանալու համար», 13րդի վերջում՝ «Նախընթացի համեմատութեամբ՝ յետ ու առաջ. պակասում է Սիւնեաց տիկին Մարիամի անունը». 18րդի վերջում՝ «Բառերը եւ մտքերը յետ ու առաջ դասաւորուած նախընթաց օրինակի համեմատութեամբ», 22րդում՝ «Բնագրի փոփոխութիւն միւսի համեմատութեամբ». 23րդի «ամս ութուտասան»ի առիթով՝ «Նախընթացում «ամս թեամբ». 23րդի վերջում՝ «Այստեղ բնագիրը պակաս ունի», 26րդը՝ մեռաւանս». 23րդի վերջում՝ «Այստեղ բնագիրը պակաս ունի» «Պակասաւոր նախորդի համեմատութեամբ» (քաղուածներս՝ Յիշ-ք, էջ 93-5ից):

Այս խմբագրութիւնն ունեցող ձեռագրի[1] եզակի լինելը մատնել է տալիս, որ այն կարող է 1371-8 թթ. ընթացքում ստեղծուած լինել նոյն ձեռագրի դրիչ եւ ստացող Մատթէոս երէցի ձեռքով. բաւական ընդարձակ յիշատակարանում նա հաղորդում է, որ քահանամեայ հասակից «բազում բաղձանաւք եւ խանդակաթ սիրով, ըղձմամբ սրտիւ եւ տենչանաւք փափագեցայ այսմ հոգիաբաշխ, աստուածապարգեւ սուրբ գրոցս, որ անուանի Հարանց վարք», եւ եօթ տարուայ ընթացքում «մեղսամակարթ անձամբ գրեցի զսա, հաւաքելով ի համաւրէն աշխարհաց, ի բազում սուրբ գրոց. զոր քաջ գիտէք, զի ոչ գոյ ի մի վայր այս-

[1] *Շատ արժէքաւոր եւ ուշագրաւ բնագրերի ժողովածու է եւ անպայման արժանի է յատուկ ուսումնասիրութեան:*

քան ամենայն եւ անուշահամ, զմայլեցուցիչ եւ ծաղկափթիթ բուրաստան, լի կենդանի անմահական բանիւք եւ վարուք աստուածահաճոյ սուրբ հարցն» (369ա)[1]: Մատթէոս երէցի փոփոխումները պէտք է որ առնած լինէին Մաշտոցի վարքի չարադրանքն իր ժողովածուի ընդհանուր ոգուն եւ բնոյթին յարմարեցնելու նպատակով: Ի վերջոյ պարտաւոր ենք արձանագրել, որ այս տարբերակն ստեղծուել է Ա. խմբագրութեան հիման վրայ:

Ամփոփենք. Գարեգին Ա. կաթողիկոս Յովսէփեանն իրեն յայտնի տարբերակների մասին գրել է. «երկրորդի բնագիրը... կրճատուած է, ուրեմն աւելի ուշ է քան առաջինը... որը հաւանաբար սկզբնականը կամ սկզբնականի աւելի մօտեցողն է» (Յիշ-ք, էջ 96, ծ. 1): Այժմ աւելի վստահ կարող ենք ասել, որ հեղինակայինին մօտ տարբերակը նորայայտ Ա. խմբագրութիւնն է, երկրորդը, անկասկած, ետհեղինակային է, առաջացման ժամանակը՝ գուցէ Ժ. դ. կէսերի շուրջ, իսկ երրորդը շատ մեծ հաւանականութեամբ ԺԴ. դ. երկրորդ կէսին Մատթէոս երէց Անդեղակոթցու ստեղծածն է:

* * *

Ձեռագրական ամբողջ՝ ոչ փոքր նիւթը համեմատած լինելով հանդերձ, 10րդ նախադասութեան սկիզբը բոլոր խմբագրութիւնների մէջ մնում է քերականօրէն անհարթ եւ իմաստով անհասկանալի. երկրորդական ընթերցումներն անտեսելով, երեք տարբերակի չարադրանքները դնենք իրար ետեւից եւ փորձենք հասկանալ՝ աչխարհաբար թէկան մի իմաստ մակաբերելով.

Ա խմբ. «Եւ թողեալ զառ ի բնակութենէ մարդկան զսիրողն ի պատուի (պահս՝ Բժ), եւ յանարգանս բազմաց չողացուցանէր զինքեանս (ինքեանս՝ ԵԾ) եւ զտեսակ (տեսակն՝ Ծ) ինչ առաքինութեան, զոր թէ ունիցի հասեալ վարատական ի ձորս եւ ի փապարս կորստեան, այլ նա ո՛չ այնպէս, այլ գնացեալ բնակեցաւ յապա լերինն յայս կղզոջ».*

Բ խմբ. «Եւ թողլով զառ ի բնակութենէ մարդկան սիրողն ի պատուի, եւ յանարգանս բազմաց նշողացուցանէր զինքեան եւ զտեսակ ինչ առաքինութեան, զոր թէ ունիցին հոսել վարատան հողմով ի ձորս եւ ի փապարս կորստեան, այլ սա ո՛չ այսպէս, այլ գնաց բնակեցաւ յապա լերին յայս կղզոջ».*

[1] *Յիշատակարանի յապաւուած հրատարակութիւնը տե՛ս ԺԴ. դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, կազմեց Լ. Ս. Խաչիկեան, Երեւան, 1950, էջ 526:*

Գ. խմբ. «եւ թողեալ զառ ի բնակութենէ մարդկան զսիրտն ի պատուի, եւ յանարգանս բազմաց չոգացուցանէր զինքեանս եւ զտեսակ ինչ առաքինութեան, զոր թէ ունիցի[*] *հասեալ վարատական ի ձորս եւ ի փապարս կորստեան, այլ նա ոչ այնպէս, այլ գնացեալ բնակեցաւ յապա լերինն յայս կղզոջ»:*

Աշխարհաբար. «Եւ պատուի (պահքի) սիրտը(-ին) մարդկանց բնակութիւնից հեռանալով, եւ յանարգութիւն շատերի իրենով (իր մէջ) շոգացնում (ցոլացնում) էր առաքինութեան մի տեսակ(ը), որ թէ ունենայ (ունենան)՝ վատրանգուած կհասնի (հոգմով հոսելով) կորստեան ձորերը եւ խոռոչները, այլ նա ո՛չ այնպէս (սա ո՛չ այսպէս), այլ գնալով (գնաց) բնակուեց այս կղզու լեռան ծայրին[1]*»:*

Սա բացատրելի դարձնելու դուցէ ոչ այնքան յաջող փորձ է, բայց այս բնագրի սահմաններում մնալով՝ հնարաւոր է միայն այսչափը. ի վերջոյ թւում է, որ ասպղանիչ դրուած տեղում կամ նախորդող «զոր» բառից առաջ բնագրական անկում՝ պակաս կայ, որ վերաբերում է գուցէ Մաշտոցի կեանքի ինչ որ անծանօթ դրուագի: Ուրեմն այս հարցի լուծումը մնում է ապագային:

Եզրափակենք. այստեղ Մաշտոց կաթողիկոսի վարքի բնագրական խմբագրութիւնների եւ նոր (յատկապէս՝ պատառիկի) ընթերցումների բառ առ բառ քննութիւն չենք անում (սա կարող էր մեզ շատ հեռուն տանել), այս հրապարակմամբ այդ գործը համարում ենք միայն սկսուած, որովհետեւ մեր ներկայ բուն նպատակը Մաշտոց կաթողիկոսի ժողոված ծիսարանի բնագրական հետազօտման հնարաւոր կատարեալ հիմքի ստեղծումն է, ուստի այստեղ արել ենք միայն նոյն ծիսարանի մաս դարձած Վարքի խմբագրական տարբերակների գատորոշումը եւ ձեռագրական նիւթի ճշգրիտ ներկայացումը:

Ընթերցումները նշանակել ենք աւանդական եղանակով, միայն փխի (փոխարէն) տեղ դրել ենք], իսկ չիք-ի տեղ՝ > նշանները. բոլոր դէպքերում նախ դրուած են ձեռագրերի պայմանանիշերը, ապա ընթերցումը, յիշեալ նշաններից մէկը, վերջում՝ հիմնաբառը: Անհրաժեշտ եւ յարմար որոշ դէպքերում տողատակում փակագծերի մէջ պահել ենք նաեւ ընտրուած եւ բնագրի մէջ դրուած ընթերցումը եւ այն աւանդող ձեռագրերի պայմանանիշերը: Բնագրի մէջ անտեսել՝ չենք նշել «ο միանիշ «և» եւ գաղտնավանկի «ը»:

[1] *Այս շարադրանքի մէջ «յապա» բառին յարմար ենք համարում «ծայր, վերջ, գագաթ» իմաստը:*

Օգտագործուած ձեռագրերի պայմանանիշերը.

Ա. 958. 255բ-58բ.
Բ. 965. 374ա-6բ.
Գ. 960. 302ա-5բ
Դ. 962. 318բ-22ա.
Ե. 998. 234ա-6բ.
Զ. 953. 600ա-603ա.
Է. 970. 358ա-62ա.
Ը. 972. 274ա-9ա.
Թ. 907. 320բ-325ա.
Ժ. 999. 233ա-5բ.
Ի. Նոր Ջուղայի 174/326. 207բ-11բ.
Լ. Անկիւրիայի 209, էջ 492-501.
Խ. 4118. 218բ-9բ, 231աբ, 220ա-1ա.
Ծ. 3066. 22ա-24բ.
Հ. 4054. 74բ-7ա.
Պ. Պատառիկ Հ[ին] 1093:

[Ա-Բ. ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ] ՍՏԵՓԱՆՆՈՍԻ ՎԵՐՆԱԳԻՐ[1] ԻՆՔՆԱԳՐՈՒԹԵԱՆ[2] ՎԱՍՆ ՎԱՐՈՒՑ ԵՐԱՆԵԼՈՅՆ ՄԱՇԴՈՑԻ[3]

1 *Յամի վեցհազարերորդի*[4] *հաբիւրերորդի*[5] *վաթսներորդի*[6] *եւ երկրորդի*[7] *(6.162) լինելութեան*[8] *արարածոց*[9] *ըստ եաւթանասնից*[10] *աւանդութեանցն*[11], *յորում ամի էր հռոմ թուականն*[12] *ՈԽԶ.*[13] *(646), եւ հայ*[14] *շրջապտոյն*[15] *ՅԽԲ.*[16] *(893), կատարեցի զնուաստ գրկունքս*[17] *զայս՝ յառաջ*[18] *քան զհինգ*[19] *կատանդին Ապրիլեայ*[20], *որ աւր ԺԶ.*[21] *(16) էր*[22] *Հրոտից*[23] *ամսոյն*[24], *ի մեծի հինգշաբաթի*[25], *ի վեցերորդ*[26] *ժամու, ի թագաւորութեանն*[27] *Հայոց*[28] *Սմբատայ, որդւոյ*[29] *Աշոտոյ*[30]

---

[1] Խ *վերնայդիր*

[2] ԵԾ *ինքնագրութեան*

